



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ԱՐՏՈՆԱԳՐԱՅԻՆ
ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ԱՌՅՈՒՂԱԲԵՐԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

No 1

Патентное управление
при Правительстве РА

ПРОМЫШЛЕННАЯ
СОБСТВЕННОСТЬ

Официальный бюллетень

Տպագրվում է 1995 թվականից

Այս տեղեկագրում զետեղված տեղեկությունները համարվում են հրապարակված
1995 թվականի հունիսի 6-ից

Երեւան 1995

Հրապարակում է Հայարտոնագիրը

375010, Երևան, Գլխավոր պող.,
Կառավարական տուն 3,

Հեռ. 561 136 ընդհանուր բաժին
580 631 արտոնագրային ինֆորմացիայի եւ ինֆորմատիկայի բաժին

Ֆաքս (7-8852) 151 823

Թողարկման պատասխանատու՝ Ա. Խաչիկյան
Խմբագիր՝ Մ. Ճուզուրյան
Տեխնիկական խմբագիր՝ Մ. Բաբայան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՕՐԵՆՄԴՐԱԿԱՆ ԵՎ ՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ	9
Հայաստանի Հանրապետության օրենքը արտոնագրերի մասին	11, 55
Գյուտերի ԽՍՀՄ հեղինակային վկայագրերի, արդյունաբերական նմուշների ԽՍՀՄ վկայագրերի եւ ԽՍՀՄ գյուտերի պետական հիմնապաշարի անունով տրված ԽՍՀՄ արտոնագրերի գործողությունը Հայաստանի Հանրապետության տարածքում դադարեցնելու եւ մնացած ժամկետի համար Հայաստանի Հանրապետության արտոնագրեր ստանալու դիմումների ներկայացման եւ քննարկման կարգը	21, 65
Գյուտերի եւ արդյունաբերական նմուշների ԽՍՀՄ եւ ԽՍՀՄ նախկին սուբյեկտ պետությունների արտոնագրերը Հայարտոնագրում գրանցելու կարգը	25, 69
Արդյունաբերական սեփականության օբյեկտների իրավական պաշտպանության հետ կապված իրավաբանական նշանակություն ունեցող գործողությունների համար գանձվող տուրքերի մասին ժամանակավոր կանոնակարգը	29, 73
ԳՅՈՒՏԵՐ	35
Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին	37
Տեղեկություններ գյուտերի նախկին ԽՍՀՄ հեղինակային վկայագրերի հիման վրա տրված ՀՀ արտոնագրերի մասին	48
ՑՈՒՑԻՉՆԵՐ	49
ՀԱՂՈՐԳԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	79
Հայաստանի Հանրապետությունում գրանցված արտոնագրային հավատարմատարների (գյուտերով եւ արդյունաբերական նմուշներով) ցուցակը	81

СОДЕРЖАНИЕ

CONTENTS

ЗАКОНОДАТЕЛЬНЫЕ И НОРМАТИВНЫЕ ДОКУМЕНТЫ	9	LEGISLATIVE ACTS AND REGULATIONS
Закон Республики Армения о патентах	11, 55	Patent Law of the Republic of Armenia
Порядок подачи и рассмотрения заявлений о прекращении на территории Республики Армения действия авторских свидетельств СССР на изобретения, свидетельств СССР на промышленные образцы и патентов СССР, выданных на имя Государственного фонда изобретений СССР, и выдачи патентов Республики Армения на оставшийся срок	21, 65	Regulation on filing and examination of requests for discontinuance on the territory of the Republic of Armenia of USSR inventors' certificates for inventions USSR patents issued in the name of the USSR State Invention Foundation, and on granting of patents of the Republic of Armenia for the remaining term.
Порядок регистрации в Армпатенте патентов СССР и государств - бывших субъектов СССР на изобретения и промышленные образцы	25, 69	Registration at the Armenian Patent Office of patents for inventions and industrial designs of USSR and former states of USSR.
Временное положение о пошлинах, взимаемых за юридически значимые действия, связанные с правовой охраной объектов промышленной собственности	29, 73	Provisional regulations on fees for the protection of industrial property rights.
ИЗОБРЕТЕНИЯ	35	INVENTIONS
Сведения о выданных патентах	37	Information on granted patents
Сведения о патентах РА, выданных на основании авторских свидетельств изобретений бывшего СССР	48	Information on patents of the Republic of Armenia granted on the basis of inventors' certificate for inventions of the former USSR.
УКАЗАТЕЛИ	49	INDEXES
СООБЩЕНИЯ	79	REPORTS
Список патентных поверенных (по изобретениям и промышленным образцам) зарегистрированных в Республике Армения	81	List of patent attorneys (on inventions and industrial designs) registered in the Republic of Armenia.



Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության գլխավոր տնօրեն Արպադ Բոգշի ուղերձը

The publication of the first issue of the Armenian Official bulletin is of particular importance because it symbolizes the consolidation and practical functioning of the patent system in Armenia.

Following its independence, Armenia established its own Patent Office. On April 22, 1993, Armenia declared the continued application to its territory of the Convention Establishing the World Intellectual Property Organization and, further, of the Paris Convention for the Protection of Industrial Property, the Madrid Agreement concerning the International Registration of Marks and the Patent Cooperation Treaty (PCT). On August 21, 1993, a Law on Patents was adopted.

By establishing an up-to-date legal, administrative and technical infrastructure and joining the system of international cooperation in the framework of WIPO, Armenia and its Patent Office, headed by Professor Sarkis L. Khantardjian, showed particular awareness, vision and energy.

I am convinced that those measures created the necessary conditions in order to promote and maintain the confidence of domestic and foreign applicants, inventors and investors.

WIPO wishes peace and prosperity for the Armenian people and further fruitful cooperation between Armenia and the rest of the world in the field of industrial property.

Arpad Bogesch
Director General
World Intellectual Property Organization

Հայկական պաշտոնական տեղեկագրի առաջին համարի հրատարակումը առանձնահատուկ նշանակություն ունի, որովհետեւ այն խորհրդանշում է Հայաստանում արտոնագրային համակարգի անրապնդումը եւ իրական գործունեությունը:

Իր անկախությունը ձեռք բերելուց հետո Հայաստանը հիմնեց սեփական արտոնագրային գերատեսչություն եւ 1993 թ. ապրիլի 22-ին հայտարարեց Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպությունը հիմնադրող կոնվենցիան, այնուհետեւ արդյունաբերական սեփականության պաշտպանության մասին Փարիզյան կոնվենցիան, նշանների միջազգային գրանցման մասին Մադրիդյան համաձայնագիրը եւ Արտոնագրային համագործակցության մասին պայմանագիրը (PCT) իր տարածքում կիրառելու շարունակման մասին: 1993 թ. հուլիսի 20-ին ընդունվեց ՀՀ «Արտոնագրերի մասին» օրենքը:

Հիմնելով արդիական օրենսդրական, վարչական եւ տեխնիկական ենթակառուցվածք եւ ՄՄՀԿ-ի շրջանակներում միանալով միջազգային համագործակցության համակարգին, Հայաստանը ի դեմս պրոֆ. Սարգիս Դանթարջյանի գլխավորած Արտոնագրային վարչության, յուրահատուկ բանիմացություն, խորաթափանցություն եւ եռանդ ցուցաբերեց:

Ես համոզված եմ, որ այդ հանգամանքները անհրաժեշտ պայմաններ ստեղծեցին տեղական եւ օտարերկրյա հայտատուների, գյուտարարների ու ներդրողների վստահությունը բարձրացնելու եւ պահպանելու գործում:

ՄՄՀԿ-ն խաղաղություն ու բարգավաճում է մտադրում հայ ժողովրդին, ինչպես նաեւ հետագա բեղմնավոր համագործակցություն Հայաստանի եւ աշխարհի մյուս երկրների միջեւ արդյունաբերական սեփականության պաշտպանության բնագավառում:



Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր արտոնագրային վարչության պետ Սարգիս Ղանթարձյան

Начальник Патентного управления при Правительстве Республики Армения Саркис Кантарджян

Հարգելի ընթերցողներ

Հայաստանի Հանրապետության կառավարության 1992թ. հունվարի 26-ի № 54 որոշմամբ ստեղծվեց Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր արտոնագրային վարչությունը (Հայարտոնագիր): Նորաստեղծ գերատեսչության հիմնական խնդիրներն են՝ Հայաստանի Հանրապետության արտոնագրային համակարգի կազմակերպման եւ կառավարման աշխատանքային ծրագրերի մշակումն ու իրագործումը, արդյունաբերական սեփականության օբյեկտների՝ գյուտերի, օգտակար սարքերի, արդյունաբերական նմուշների, ապրանքային նշանների իրավական պաշտպանությունը, պաշտպանական փաստաթղթերի հանձնումը, արդյունաբերական սեփականության պաշտպանության մասին օրենսդրության մշակմանը մասնակցելը եւ դրա կիրառման պրակտիկայի ընդհանրացումը, ինչպես նաեւ կատարելագործման եւ պահպանման վերահսկողությունն իրականացնելու վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը, արդյունաբերական սեփականության բնագավառում արտասահմանյան երկրների եւ միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությունը, այդ թվում միջազգային պայմանագրերի շրջանակներում, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետությունում իրավական պաշտպանություն ստացած արդյունաբերական սեփականության օբյեկտների մասին տեղեկատվության ապահովումը:

Հայարտոնագիրն սկսում է իր պաշտոնական տեղեկագրի կանոնավոր հրատարակումը, որում կիրառարկվեն Հայաստանի Հանրապետությունում իրավական պաշտպանություն ստացած արդյունաբերական սեփականության օբյեկտների մասին տեղեկություններ, ինչպես նաեւ տեղեկություններ Հայաստանի Հանրապետությունում այդ բնագավառին վերաբերող ընդունված օրենքների եւ նորմատիվային ակտերի, ՀՀ միջազգային պայմանագրերի մասին:

Տեղեկագրի «Գյուտեր» բաժնում կիրառարկվեն տեղեկություններ Հայաստանի Հանրապետության համապատասխան պետական մատյանում գրանցված գյուտերի արտոնագրերի մասին, այդ թվում մինչեւ 1992թ. դեկտեմբերի 8-ի առաջնությամբ գյուտերի ԽՍՀՄ եւ նախկինում նրա սուբյեկտ հանդիսացող պետությունների պաշտպանական փաստաթղթերի հիման վրա տրված արտոնագրերի

Уважаемые читатели!

Правительство Республики Армения своим постановлением от 26 января 1992г. №54 приняло решение об образовании Патентного управления при Правительстве Республики Армения (Армпатент).

Основными задачами вновь созданного ведомства являются: разработка и осуществление работ по организации патентной системы Республики Армения и управления ею, предоставление правовой охраны объектам промышленной собственности (изобретениям, полезным моделям, промышленным образцам, товарным знакам), выдача охранных документов, разработка законодательства по охране промышленной собственности и обобщение практики его применения, представление предложений по осуществлению контроля над его соблюдением и усовершенствованием, сотрудничество с зарубежными странами и международными организациями в области охраны промышленной собственности, в том числе в рамках международных договоров, а также обеспечение информацией об объектах промышленной собственности, получивших правовую охрану в Республике Армения.

Армпатент начинает систематическое издание своего официального бюллетеня, в котором будут публиковаться сведения об объектах промышленной собственности, получивших правовую охрану в Республике Армения, а также сведения о принятых в Республике Армения законах и нормативных актах, касающихся этой сферы, о международных договорах Республики Армения.

Раздел "Изобретения" содержит сведения о патентах на изобретения, зарегистрированные в соответствующем государственном реестре Республики Армения, в том числе о патентах на изобретения с приоритетом до 8 декабря 1992г., выданных на основе охранных документов СССР и государств - бывших субъектов СССР.

В разделе "Полезные модели" публикуются сведения о патентах на полезные модели, зарегистрированные в соответствующем государ-

**ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՎ
ՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ
ՓԱՍՏԱԹՂԹԵՐ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

ԱՐՏՈՆԱԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ

**Գլուխ 1
Ընդհանուր դրույթներ**

Հոդված 1. Օրենքի նպատակները

Սույն օրենքը կարգավորում է գյուտերի, օգտակար սարքերի եւ արդյունաբերական նմուշների (արդյունաբերական սեփականության օբյեկտների) ստեղծման, իրավական պաշտպանության եւ օգտագործման հետ կապված գույքային եւ անձնական ոչ գույքային հարաբերությունները:

Հոդված 2. Արդյունաբերական սեփականության մասին օրենսդրությունը

Գյուտերի, օգտակար սարքերի եւ արդյունաբերական նմուշների իրավական պաշտպանության եւ օգտագործման հետ կապված գույքային եւ անձնական ոչ գույքային հարաբերությունները կարգավորվում են սույն օրենքով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով եւ Հայաստանի Հանրապետության օրենսդրական այլ ակտերով:

Հոդված 3. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր արտոնագրային վարչությունը

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր արտոնագրային վարչությունը (Հայարտոնագիր) սույն օրենքին համապատասխան ընդունում է արդյունաբերական սեփականության օբյեկտների հայտեր, անցկացնում է հայտերի փորձաքննություն, տալիս է արտոնագիր, իրականացնում է սույն օրենքի կիրառմանը եւ հրապարակային տեղեկատվությանը վերաբերող հրատարակչական գործունեություն, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված իր կանոնադրությամբ նախատեսված այլ գործունեություն:

Հայարտոնագիրն ունի զանգատարկման խորհուրդ, որը լուծում է արդյունաբերական սեփականության օբյեկտների իրավական պաշտպանության հետ կապված վիճելի հարցերը:

Գանգատարկման խորհուրդը գործում է Հայարտոնագրի կողմից հաստատված կանոնադրության հիման վրա:

Հոդված 4. Գյուտի, օգտակար սարքի, արդյունաբերական նմուշի իրավական պաշտպանությունը

Գյուտի, օգտակար սարքի, արդյունաբերական նմուշի իրավունքը պաշտպանվում է պետության կողմից եւ հաստատագրվում է արտոնագրով:

Արտոնագրով հաստատագրվում է արդյունաբերական սեփականության օբյեկտի նկատմամբ հեղինակությունը, օբյեկտի առաջնությունը եւ օգտագործման բացառիկ իրավունքը:

Գյուտի արտոնագիրը գործում է Հայարտոնագրի կողմից հայտի ստացման օրվանից 20 տարի ժամանակով, արդյունաբերական նմուշի արտոնագիրը՝ 15 տարի, իսկ օգտակար սարքի արտոնագիրը՝ 10 տարի ժամանակով:

Գյուտի եւ օգտակար սարքի արտոնագրով վերապահված իրավական պաշտպանության ծավալը որոշվում է դրանց հավակնության սահմանումով, իսկ արդյունաբերական նմուշի արտոնագրով վերապահված իրավական պաշտպանության ծավալը՝ հորի (մանրակերտի, նկարի) լուսանկարների վրա արտահայտված եւ արդյունաբերական նմուշի նկարագրության մեջ թվարկված էական հատկանիշների ամբողջությամբ:

Պետության կողմից գաղտնի ճանաչված գյուտերի, օգտակար սարքերի, արդյունաբերական նմուշների օգտագործումը եւ դրանց մասին տեղեկությունների հրապարակումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով:

Իրավական պաշտպանության ենթակա չեն այն գյուտերը, օգտակար սարքերն ու արդյունաբերական նմուշները, որոնց հրապարակումն ու օգտագործումը հակասում են հասարակության շահերին, մարդասիրության եւ բարոյականության սկզբունքներին:

Գլուխ 2

Արդյունաբերական սեփականության օբյեկտների արտոնագրաունակության պայմանները

Հոդված 5. Գյուտի արտոնագրաունակության պայմանները

Գյուտը պաշտպանվում է օրենքով սահմանված կարգով, եթե այն նոր է, ունի գյուտարարական մակարդակ եւ արդյունաբերորեն կիրառելի է (գյուտի արտոնագրաունակության պայմաններ):

Գյուտը նոր է, եթե այն չի հանդիսանում տեխնիկայի մակարդակի մաս:

Գյուտն ունի գյուտարարական մակարդակ, եթե մասնագետի համար այն անհայտորեն չի բըխում տեխնիկայի մակարդակից:

Տեխնիկայի մակարդակը ներառում է մինչև տվյալ գյուտի առաջնության թվականը աշխարհում հանրամատչելի դարձած ցանկացած տեղեկություն:

Արտոնագրմանը չի խոչընդոտում հեղինակի (հայտատուի) կամ նրանից ուղղակիորեն կամ անուղղակիորեն տեղեկություն ստացած այլ անձի կողմից գյուտի էության հրապարակային բացահայտումը (այդ հանգամանքը պետք է ապացուցի հայտատուն), եթե այն կատարվել է գյուտի հայտի ներկայացմանը նախորդող 12 ամսվա ընթացքում, իսկ ավելի վաղ առաջնություն պահանջելու դեպքում՝ այդ առաջնության թվականին նախորդող 12 ամսվա ընթացքում:

Գյուտը արդյունաբերորեն կիրառելի է, եթե հնարավոր է այն պատրաստել կամ օգտագործել արդյունաբերության, գյուղատնտեսության, առողջապահության եւ այլ ոլորտներում:

Գյուտի առարկա կարող է համարվել սարքը, եղանակը, նյութը, մանրէի շտամը, բույսերի եւ կենդանիների բջիջների կուլտուրայի շտամը, բույսի տեսակը, կենդանիների ցեղատեսակը, ինչպես նաեւ հայտնի սարքի, եղանակի, նյութի, շտամի կիրառումը նոր նշանակությամբ:

Արտոնագրառնակ գյուտեր չեն հանդիսանում՝

- ա) գիտական տեսությունները եւ մաթեմատիկական մեթոդները,
- բ) տնտեսության կազմակերպման եւ ղեկավարման եղանակները,
- գ) պայմանական նշանները, կարգացուցակներն ու կանոնները,
- դ) մտավոր գործողությունների կատարման եղանակներն ու կանոնները,
- ե) հաշվիչ մեքենաների ալգորիթմներն ու ծրագրերը,
- զ) կառույցների, շենքերի եւ տարածքների հատակագծերի սխեմաներն ու նախագծերը,
- է) իրի արտաքին տեսքին վերաբերող այն առաջարկությունները, որոնք ունեն միայն գեղագիտական նշանակություն,
- ը) ինտեգրալային սխեմաների տոպոլոգիաները:

Հոդված 6. Օգտակար սարքի արտոնագրառնակության պայմանները

Որպես օգտակար սարք օրենքով սահմանված կարգով պաշտպանվում է նոր ու արդյունաբերորեն կիրառելի այն լուծումը, որը վերաբերում է արտադրության միջոցների եւ սպառման առարկաների, ինչպես նաեւ դրանց բաղկացուցիչ մասերի կառուցվածքային իրականացմանը (օգտակար սարքի արտոնագրառնակության պայմաններ):

Օգտակար սարքը նոր է, եթե այն չի հանդիսանում տեխնիկայի մակարդակի մաս:

Տեխնիկայի մակարդակը որոշվում է մինչև օգտակար սարքի առաջնության թվականը ներկայացված օգտակար սարքի հետ նույնանշանակ միջոցների մասին աշխարհում հրատարակված հանրամատչելի, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետությունում այդպիսի միջոցների կիրառման մասին տեղեկություններով:

Արտոնագրմանը չի խոչընդոտում հեղինակի (հայտատուի) կամ նրանից ուղղակիորեն կամ

անուղղակիորեն տեղեկություն ստացած որեւէ անձի կողմից օգտակար սարքի էության հրապարակային բացահայտումը (այդ հանգամանքը պետք է ապացուցի հայտատուն), եթե այն կատարվել է օգտակար սարքի հայտի ներկայացմանը նախորդող 12 ամսվա ընթացքում, իսկ ավելի վաղ առաջնություն պահանջելու դեպքում՝ այդ առաջնության թվականին նախորդող 12 ամսվա ընթացքում:

Օգտակար սարքը արդյունաբերորեն կիրառելի է, եթե հնարավոր է այն պատրաստել կամ օգտագործել արդյունաբերության, գյուղատնտեսության, առողջապահության եւ այլ ոլորտներում:

Արտոնագրառնակ օգտակար սարքեր չեն հանդիսանում՝ եղանակները, նյութերը, մանրէի շտամը, բույսերի եւ կենդանիների բջիջների կուլտուրայի շտամը, դրանց կիրառումը նոր նշանակությամբ, բույսերի տեսակները եւ կենդանիների ցեղատեսակները, ինչպես նաեւ սույն օրենքի 5 հոդվածի 8-րդ մասում նշված օբյեկտները:

Հոդված 7. Արդյունաբերական նմուշի արտոնագրառնակության պայմանները

Որպես արդյունաբերական նմուշ օրենքով սահմանված կարգով պաշտպանվում է իրի արտաքին տեսքը բնորոշող գեղարվեստական ցվածքային այն լուծումը, որը նոր է, յուրօրինակ եւ արդյունաբերորեն կիրառելի (արդյունաբերական նմուշի արտոնագրառնակության պայմաններ):

Արդյունաբերական նմուշը նոր է, եթե իրի գեղագիտական կամ էրզոնոմիկական առանձնահատկությունները պայմանավորող էական հատկանիշների ամբողջությունը մինչև արդյունաբերական նմուշի առաջնության թվականը հայտնի չէ աշխարհում՝ հանրամատչելի բոլոր տեսակի տեղեկություններից:

Արտոնագրմանը չի խոչընդոտում հեղինակի (հայտատուի) կամ նրանից ուղղակիորեն կամ անուղղակիորեն տեղեկություն ստացած որեւէ անձի կողմից արդյունաբերական նմուշի էության հրապարակային բացահայտումը (այդ հանգամանքը պետք է ապացուցի հայտատուն), եթե այն կատարվել է արդյունաբերական նմուշի հայտի ներկայացմանը նախորդող 6 ամսվա ընթացքում, իսկ ավելի վաղ առաջնություն պահանջելու դեպքում՝ այդ առաջնության թվականին նախորդող 6 ամսվա ընթացքում:

Արդյունաբերական նմուշը ճանաչվում է յուրօրինակ, եթե նրա էական հատկանիշները պայմանավորում են իրի գեղագիտական առանձնահատկությունների ստեղծագործական բնույթը:

Արդյունաբերական նմուշն արդյունաբերորեն կիրառելի է, եթե այն կարող է բազմակի վերարտադրվել համապատասխան իրը պատրաստելու միջոցով:

Արտոնագրառնակ արդյունաբերական նմուշներ չեն հանդիսանում՝

- ա) այն լուծումները, որոնք բացառապես պայմանավորված են իրի տեխնիկական ֆունկցիաներով,
- բ) ճարտարապետության օբյեկտների (բացառությամբ ճարտարապետական փոքր ձեւերի), արդյունաբերական, հիդրոտեխնիկական եւ ստացիոնար այլ կառույցների լուծումները,
- գ) տպագրական արտադրանքի լուծումները որպես այդպիսին,
- դ) հեղուկ, գազակերպ, սորուն կամ համանման նյութերից պատրաստված, անկայուն ձեւ ունեցող առարկաների լուծումները:

Գլուխ 3

Արդյունաբերական սեփականության օբյեկտի հեղինակը եւ արտոնագրատերը

Հոդված 8. Արդյունաբերական սեփականության օբյեկտի հեղինակը

Գյուտի, օգտակար սարքի, արդյունաբերական նմուշի հեղինակ է ճանաչվում այն ֆիզիկական անձը, որի ստեղծագործական աշխատանքով է այն ստեղծվել:

Եթե արդյունաբերական սեփականության օբյեկտը ստեղծվել է մեկից ավելի ֆիզիկական անձանց համատեղ ստեղծագործական աշխատանքով, ապա նրանք բոլորն էլ ճանաչվում են հեղինակներ: Հեղինակների կողմից իրենց իրավունքներից օգտվելու կարգը որոշվում է նրանց միջև կնքված պայմանագրով:

Արդյունաբերական սեփականության օբյեկտի հեղինակներ չեն ճանաչվում այն ֆիզիկական անձինք, ովքեր արդյունաբերական սեփականության օբյեկտի ստեղծման գործում չեն ունեցել անձնական ստեղծագործական ներդրում, հեղինակին ցույց են տվել զուտ տեխնիկական, կազմակերպական կամ նյութական բնույթի օգնություն կամ աջակցել են միայն հայտի եւ այլ փաստաթղթերի ձեւակերպմանը:

Հեղինակության իրավունքը անօտարելի անձնական իրավունք է եւ պաշտպանվում է անժամկետ:

Գյուտի, օգտակար սարքի, արդյունաբերական նմուշի հայտի քննարկման ցանկացած փուլում հեղինակն իրավունք ունի իր անունով կամ այլ անվանումով այն կոչելու խնդրանքով դիմել Հայարտոնագիր:

Եթե արդյունաբերական սեփականության օբյեկտը ստեղծվել է մի քանի հեղինակների կողմից, ապա անվանակոչման դիմումը ներկայացվում է բոլոր հեղինակների համաձայնությամբ:

Հեղինակն իրավունք ունի արտոնագրի մասին հրապարակվող տեղեկատվության մեջ չհիշատակվել որպես հեղինակ:

Հոդված 9. Արդյունաբերական սեփականության օբյեկտի արտոնագրատերը

Գյուտի, օգտակար սարքի, արդյունաբերական նմուշի արտոնագիրը տրվում է հեղինակին (հեղինակներին) կամ նրա (նրանց) ժառանգորդներին, գործատուին, ֆիզիկական կամ իրավաբանական այլ անձանց (արտոնագրատեր) հեղինակի (հեղինակների) եւ վերջիններիս միջև կնքված պայմանագրի առկայության դեպքում, որոնք նշված են հեղինակի (հեղինակների) կամ նրա (նրանց) իրավահաջորդի կողմից Հայարտոնագիր ներկայացված հայտի կամ այն դիմումի մեջ, որը ներկայացված է մինչեւ գյուտի, օգտակար սարքի, արդյունաբերական նմուշի պետական գրանցումը:

Գյուտի, օգտակար սարքի, արդյունաբերական նմուշի արտոնագիրը տրվում է գործատուին, եթե՝

ա) դրանք ստեղծվել են աշխատանքային պայմանագրի կատարման ընթացքում, որտեղ նախատեսված է նաեւ արդյունաբերական սեփականության օբյեկտների ստեղծումը եւ դրա համար հատուկ վարձատրություն,

բ) գործատուի եւ հեղինակի միջև կնքված է առանձին պայմանագիր կանխատեսվող կամ ըստեղծված գյուտի, օգտակար սարքի, արդյունաբերական նմուշի արտոնագիր ստանալու իրավունքի գիջման եւ դրա համար հատուկ վարձատրության վերաբերյալ:

Դրանց հետ մեկտեղ այդ պայմանագրերով կարող են սահմանվել նաեւ նրանց փոխհարաբերությունները արդյունաբերական սեփականության օբյեկտների գաղտնիության պահպանման, նյութական, արտադրական եւ այլ բնույթի հարցերում, ինչպես նաեւ աշխատողի վարձատրության չափն ու վճարման կարգը:

Պայմանագրից գործատուի հրաժարվելու կամ դրա պայմանները չկատարելու դեպքում արտոնագիրը տրվում է հեղինակին կամ երրորդ անձի՝ համաձայն սույն հոդվածի 1-ին մասի:

Պայմանագրի բացակայության դեպքում արտոնագիրը տրվում է՝

ա) գործատուին, եթե ստեղծված գյուտը, օգտակար սարքը, արդյունաբերական նմուշը վերաբերում է աշխատողի ծառայողական գործունեությանը: Այս պարագայում գործատուն պարտավոր է հեղինակին վճարել համարժեք փոխհատուցում:

բ) հեղինակին, եթե ստեղծված գյուտը, օգտակար սարքը, արդյունաբերական նմուշը չի վերաբերում աշխատողի ծառայողական գործունեությանը, սակայն վերաբերում է ձեռնարկության գործունեության ոլորտին: Այս դեպքում գործատուն իրավունք ունի գյուտը, օգտակար սարքը, արդյունաբերական նմուշն օգտագործել սեփական արտադրության մեջ, հեղինակին վճարելով համարժեք փոխհատուցում: Արտոնագիր ստանալու իրավունքը հեղինակի կողմից երրորդ անձի գիջելու դեպքում գործատուն օգտվում է այն ստանալու առաջնահերթ իրավունքից:

գ) հեղինակին կամ սույն հոդվածի 1-ին մասի համաձայն երրորդ անձի, եթե ստեղծված գյուտը, օգտակար սարքը, արդյունաբերական նմուշը չի վերաբերում ձեռնարկության գործունեության ոլորտին:

Աշխատողը պարտավոր է իր ծառայողական գործունեությանը, ինչպես նաեւ ձեռնարկության գործունեության ոլորտին վերաբերող ստեղծված գյուտի, օգտակար սարքի, արդյունաբերական նմուշի մասին գործատուին գրավոր հայտնել ստեղծման օրվանից մեկամսյա ժամկետում:

Եթե գյուտի, օգտակար սարքի, արդյունաբերական նմուշի ստեղծման մասին գործատուին հայտնելու օրվանից երեք ամսվա ընթացքում վերջինս հայտ չի ներկայացնում Հայարտոնագիր, ապա հայտ ներկայացնելու եւ արտոնագիր ստանալու իրավունքն անցնում է հեղինակին կամ երրորդ անձի՝ համաձայն սույն հոդվածի 1-ին մասի:

Հոդված 10. Արդյունաբերական սեփականության օբյեկտի հեղինակի եւ արտոնագրատիրոջ իրավունքների ժառանգաբար անցնելը

Հայտ ներկայացնելու եւ արտոնագիր ստանալու իրավունքը, գյուտի, օգտակար սարքի, արդյունաբերական նմուշի օգտագործման բացառիկ իրավունքը, ինչպես նաեւ դրանց օգտագործումից առաջացած եկամուտները ստանալու իրավունքը օրենքով սահմանված կարգով անցնում է ժառանգաբար:

Գլուխ 4

Արդյունաբերական սեփականության օբյեկտների օգտագործման բացառիկ իրավունքը

Հոդված 11. Արտոնագրատիրոջ իրավունքները եւ պարտականությունները

Արտոնագրով պաշտպանվող արդյունաբերական սեփականության օբյեկտի օգտագործման բացառիկ իրավունքը պատկանում է արտոնագրատիրոջը, որը նրան հնարավորություն է տալիս այն օգտագործել իր հայեցողությամբ, եթե դա չի խախտում այլ արտոնագրատիրերի իրավունքները, եւ արգելել դրա օգտագործումը սույն օրենքին հակասող դեպքերում:

Մի քանի անձանց պատկանող արդյունաբերական սեփականության օբյեկտի օգտագործման հետ կապված փոխհարաբերությունները որոշվում են նրանց միջեւ կնքված պայմանագրով: Նման պայմանագրի բացակայության դեպքում նրանցից յուրաքանչյուրն իրավունք ունի պաշտպանվող օբյեկտը օգտագործել իր հայեցողությամբ, սակայն առանց մյուս արտոնագրատիրերի համաձայնության իրավունք չունի արտոնագիրը գիջել այլ անձանց կամ տալ օգտագործման թույլտվություն (լիցենզիա):

Արտոնագրատիրոջ բացառիկ իրավունքի խախտում է համարվում արտոնագրով պաշտպանվող լուծման օգտագործմանը արտադրանքի պատրաստումը, օգտագործումը, ներմուծումը, պահեստավորումը, վաճառքի առաջարկությունը, վաճառքը եւ տնտեսական շրջանառության մեջ մտցնելը մյուս գործողությունները, ինչպես նաեւ գյուտի արտոնագրով պաշտպանվող եղանակի կիրառումը առանց արտոնագրատիրոջ թույլտվության:

Եթե արտոնագրատիրը չի կարող գյուտը, օգտակար սարքը, արդյունաբերական նմուշն օգտագործել առանց մեկ ուրիշ արտոնագրատիրոջ բացառիկ իրավունքը խախտելու, ապա նա իրավունք ունի վերջինից պահանջել կնքելու լիցենզային պայմանագիր: Համաձայնության չգալու դեպքում հարցը լուծվում է դատական կարգով:

Արտոնագրատիրը իրավունք ունի արտոնագիրը գիջել ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձի: Ձիջման մասին պայմանագիրը գրանցվում է Հայարտոնագրում: Չգրանցված պայմանագիրը իրավաբանական ուժ չունի:

Հոդված 12. Արտոնագրատիրոջ բացառիկ իրավունքի խախտում չհամարվող գործողությունները

Արտոնագրատիրոջ բացառիկ իրավունքի խախտում չի համարվում արտոնագրված գյուտի, օգտակար սարքի, արդյունաբերական նմուշի կամ դրանք պարունակող միջոցների օգտագործումը՝

- ա) որպես գիտափորձի կամ գիտական հետազոտության առարկա,
- բ) բժշկի դեղատոմսով դեղատներում դեղորայքի միանվագ պատրաստման դեպքում,
- գ) այլ պետությանը պատկանող եւ պատահաբար կամ ժամանակավորապես Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող ցանկացած փոխադրամիջոցի վրա, եթե դա պայմանավորված է բացառապես փոխադրամիջոցի կարիքներով եւ փոխադրամիջոցը պատկանում է այն պետության քա-

ղաքացիներին եւ իրավաբանական անձանց, որը նման իրավունքներ է վերապահում Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին եւ իրավաբանական անձանց,

դ) անձնական կարիքների համար՝ առանց եկանուտ ստանալու նպատակի:

Հոդված 13. Վաղօրոք օգտագործման իրավունքը

Ֆիզիկական կամ իրավաբանական անձինք, ովքեր մինչեւ արդյունաբերական սեփականության օբյեկտի առաջնության թվականը Հայաստանի Հանրապետության տարածքում հեղինակից անկախ ստեղծել եւ օգտագործել են նույնատիպ լուծում կամ կատարել են դրա համար անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքներ, հետագայում պահպանում են դրա անհատույց օգտագործման իրավունքը՝ առանց արտադրական ծավալների ընդլայնման (վաղօրոք օգտագործման իրավունք):

Վաղօրոք օգտագործման իրավունքը թույլատրվում է փոխանցել ֆիզիկական կամ իրավաբանական այլ անձի միայն այն արտադրության հետ միասին, որտեղ օգտագործվել է նույնատիպ լուծում կամ կատարվել են դրա համար անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքներ:

Հոդված 14. Արդյունաբերական սեփականության օբյեկտի օգտագործումը

Արդյունաբերական սեփականության օբյեկտի օգտագործում է համարվում դրա կիրառմամբ պատրաստված արտադրանքը տնտեսական շրջանառության մեջ մտցնելը, ինչպես նաեւ արտոնագրված եղանակի կիրառումը:

Արտադրանքը (իրը) համարվում է արտոնագրված գյուտի, օգտակար սարքի օգտագործմամբ պատրաստված, իսկ գյուտի արտոնագրով պաշտպանվող եղանակը՝ կիրառված, եթե դրա մեջ օգտագործված է գյուտի, օգտակար սարքի հավակնության սահմանման անկախ կետի յուրաքանչյուր հատկանիշ կամ վերջինիս համարժեքը:

Իրը համարվում է արտոնագրված արդյունաբերական նմուշի օգտագործմամբ պատրաստված, եթե այն պարունակում է արդյունաբերական նմուշի բոլոր էական հատկանիշները:

Արտադրանքի ստացման եղանակի արտոնագրի գործողությունը տարածվում է նաեւ այդ եղանակով ստացված արտադրանքի վրա: Ընդ որում արտադրանքը համարվում է արտոնագրված եղանակով ստացված, եթե չի ապացուցված, որ այն ստացվել է այլ եղանակով:

Հոդված 15. Արդյունաբերական սեփականության օբյեկտի օգտագործման իրավունք տալը

Յուրաքանչյուր անձ կարող է արտոնագրված արդյունաբերական սեփականության օբյեկտը օգտագործել միայն արտոնագրատիրոջ թույլտրվությամբ՝ լիցենզային պայմանագրի հիման վրա:

Լիցենզային պայմանագրով արտոնագրատիրը (լիցենզատու) պարտավորվում է մեկ այլ անձի (լիցենզառու) իրավունք տալ արտոնագրով պաշտպանվող օբյեկտը օգտագործելու պայմանագրով նախատեսված ծավալով, իսկ լիցենզառուն պարտավորվում է լիցենզատուին մուծել պայմանագրով սահմանված վճարումները եւ իրականացնել պայմանագրով նախատեսված այլ գործողություններ:

Բացառիկ լիցենզի դեպքում արդյունաբերական սեփականության օբյեկտի օգտագործման բացառիկ իրավունքը փոխանցվում է լիցենզատուին պայմանագրով որոշված սահմաններում, ընդամենը պահպանվում է լիցենզատուի կողմից արդյունաբերական սեփականության օբյեկտի օգտագործման իրավունքը այն մասով, որը չի փոխանցվել լիցենզատուին:

Հասարակ լիցենզի դեպքում լիցենզատուն, արդյունաբերական սեփականության օբյեկտի օգտագործման իրավունքը փոխանցելով լիցենզատուին, պահպանում է արտոնագրից բխող բոլոր իրավունքները, այդ թվում նաև՝ երրորդ անձի լիցենզ տալու իրավունքը:

Հայարտոնագրում չգրանցված լիցենզային պայմանագիրը իրավաբանական ուժ չունի:

Արտոնագրատերը կարող է դիմել Հայարտոնագիր արդյունաբերական սեփականության օբյեկտի օգտագործման իրավունքը այլ անձի տալու մասին հայտարարություն հրապարակելու խնդրանքով (բաց լիցենզ):

Այդ հայտարարության հրապարակմանը հաջորդող տարվանից արտոնագիրը ուժի մեջ պահելու տուրքը նվազեցվում է 50 տոկոսով:

Բաց լիցենզ ձեռք բերելու ցանկություն հայտնած անձը պարտավոր է արտոնագրատիրոջ հետ պայմանագիր կնքել վճարումների մասին: Պայմանագրի խախտման հետ կապված վեճերը լուծվում են դատական կարգով: Բաց լիցենզի իրավունքի ընձեռնման մասին արտոնագրատիրոջ դիմումը ենթակա չէ ետկանչման:

Հոդված 16. Հարկադրական լիցենզ

Հայաստանի Հանրապետության պաշտպանության եւ հասարակական կարգի պահպանության շահերից ելնելով, ինչպես նաև արտակարգ իրավիճակներում Հայաստանի Հանրապետության կառավարությունը առանց արտոնագրատիրոջ համաձայնության իրավունք ունի երրորդ անձանց թույլատրել օգտագործելու գյուտը, օգտակար սարքը, արդյունաբերական նմուշը, վերջիններիս պարտավորեցնելով արտոնագրատիրոջը վճարել համարժեք դրամական փոխհատուցում (հարկադրական լիցենզ):

Փոխհատուցման չափի վերաբերյալ վեճերը լուծվում են դատական կարգով:

Եթե գյուտը, օգտակար սարքը, արդյունաբերական նմուշը պետական գրանցման օրվանից 4 տարվա ընթացքում կամ չի օգտագործվել, կամ օգտագործվել է ոչ բավականաչափ, կամ օգտագործվել է գյուտի, օգտակար սարքի, արդյունաբերական նմուշի կիրառմամբ արտասահմանում պատրաստված արտադրանքը Հայաստանի Հանրապետությունում տնտեսական շրջանառության մեջ մտցնելու եղանակով, անկախ արտադրանքի ծավալներից, այդ ժամկետը լրանալուց հետո արտոնագրատիրոջ հետ լիցենզային պայմանագիր կնքելու անհնարինության դեպքում, գյուտը, օգտակար սարքը, արդյունաբերական նմուշը օգտագործել ցանկացող յուրաքանչյուր անձ հարկադրական հասարակ լիցենզի խնդրանքով կարող է դիմել Հայաստանի Հանրապետության կառավարություն՝ նշելով օգտագործման ծավալները, վճարումների չափերը, կարգն ու ժամկետները: Այդ դեպքում լիցենզ տրվում է, եթե արտոնագրատերը չապացուցի, որ գյուտի, օգտակար սարքի, արդյունաբերական նմուշի ոչ բավականաչափ օգտագործումը կամ չօգտագործելը պայմանավորված է հարգելի պատճառներով:

Հարկադրական լիցենզի հետ կապված վրձարումների չափերի, կարգի եւ ժամկետների վերաբերյալ վեճերը լուծվում են դատական կարգով:

Հոդված 17. Արտոնագրի խախտումը

Արտոնագրի խախտում է համարվում ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից արտոնագրով պաշտպանվող արդյունաբերական սեփականության օբյեկտի այն օգտագործումը, որը հակասում է սույն օրենքին:

Արտոնագրատիրոջ կամ բացառիկ լիցենզ ունեցող անձի պահանջով պետք է դադարեցվի արտոնագրի խախտումով իրականացվող գործողությունը, իսկ արտոնագիրը խախտող ֆիզիկական կամ իրավաբանական անձը պարտավոր է հատուցել արտոնագրատիրոջը հասցված վնասները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Գլուխ 5

Արդյունաբերական սեփականության օբյեկտների արտոնագրումը

Հոդված 18. Արտոնագիր խնդրարկելու փաստաթղթերը

Արտոնագիր խնդրարկելու փաստաթղթերը Հայարտոնագիր է ներկայացնում հեղինակը, գործատուն կամ նրանց իրավահաջորդը (հայտատուն):

Հայտի դիմումը ներկայացվում է հայերեն լեզվով:

Հայտի մյուս փաստաթղթերը կարող են ներկայացվել այլ լեզվով: Այս դեպքում հայտատուն պարտավոր է դրանց հայերեն թարգմանությունը Հայարտոնագիր ներկայացնել հայտի ստացման օրվանից երկամսյա ժամկետում:

Հայտը կարող է ներկայացվել Հայարտոնագրում գրանցված արտոնագրային հավատարմատարի միջոցով:

Հայաստանի Հանրապետությունից դուրս ապրող ֆիզիկական անձինք եւ արտասահմանյան իրավաբանական անձինք գյուտի, օգտակար սարքի, արդյունաբերական նմուշի արտոնագիր ստանալու եւ այն գործողության մեջ պահելու հետ կապված գործերը վարում են Հայարտոնագրում գրանցված արտոնագրային հավատարմատարների միջոցով:

Արտոնագրային հավատարմատարի իրավասությունը վավերացվում է այն անձի կողմից տրված լիազորագրով, որի անունով խնդրարկվում է արտոնագիրը:

Արտոնագրային հավատարմատարների գործունեությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված կանոնադրությամբ:

Արտոնագրային հավատարմատարների գրանցման կարգը սահմանում է Հայարտոնագիրը:

Հոդված 19. Գյուտի արտոնագիր խնդրարկելու փաստաթղթերը

Գյուտի արտոնագիր խնդրարկելու փաստաթղթերը (գյուտի հայտ) պետք է վերաբերեն մեկ գյուտի կամ միասնական գյուտարարական մտահղմանը կազմող մի խումբ գյուտերի (գյուտի միասնության պահանջ):

Գյուտի հայտը պետք է պարունակի՝

ա) դիմում արտոնագիր ստանալու համար, որտեղ նշվում են հեղինակը (հեղինակները), հայտատուն, այն անձը (անձինք), որի (որոնց) անունով խնդրարկվում է արտոնագիրը, եւ նրանց բնակության կամ գտնվելու վայրը,

բ) գյուտի նկարագրությունը, որը սպառիչ կերպով բացահայտում է այն եւ բավարար է գյուտի իրականացման համար,

գ) գյուտի հավակնության սահմանումը, որն արտահայտում է դրա էությունը եւ ամբողջապես հիմնված է նկարագրության վրա,

դ) զծագրեր եւ այլ նյութեր, եթե դրանք անհրաժեշտ են գյուտի էությունը հասկանալու համար:

ե) համառոտ շարադրանք (ռեֆերատ):

Գյուտի հայտին կցվում է սահմանված չափով տուրքի վճարումը հաստատող փաստաթուղթը, զեղչով տուրք վճարելու կամ տուրքից ազատվելու հիմքը:

Գյուտի հայտի փաստաթղթերի նկատմամբ պահանջները սահմանում է Հայարտոնագիրը:

Հոդված 20. Օգտակար սարքի արտոնագիր խնդրարկելու փաստաթղթերը

Օգտակար սարքի արտոնագիր խնդրարկելու փաստաթղթերը (օգտակար սարքի հայտ) պետք է վերաբերեն մեկ օգտակար սարքի կամ միասնական մտահղացում կազմող մի խումբ օգտակար սարքերի (օգտակար սարքի միասնության պահանջ):

Օգտակար սարքի հայտը պետք է պարունակի՝

ա) դիմում արտոնագիր ստանալու համար, որտեղ նշվում են հեղինակը (հեղինակները), հայտատուն, այն անձը (անձինք), որի (որոնց) անունով խնդրարկվում է արտոնագիրը, եւ նրանց բնակության կամ գտնվելու վայրը,

բ) օգտակար սարքի նկարագրությունը, որը սպառիչ կերպով բացահայտում է այն եւ բավարար է օգտակար սարքի իրականացման համար,

գ) օգտակար սարքի հավակնության սահմանումը, որն արտահայտում է դրա էությունը եւ ամբողջապես հիմնված է նկարագրության վրա,

դ) զծագրեր եւ այլ նյութեր, որոնք անհրաժեշտ են օգտակար սարքի էությունը հասկանալու համար,

ե) համառոտ շարադրանք (ռեֆերատ):

Օգտակար սարքի հայտին կցվում է սահմանված չափով տուրքի վճարումը հաստատող փաստաթուղթը, զեղչով տուրք վճարելու կամ տուրքից ազատվելու հիմքը:

Օգտակար սարքի հայտի փաստաթղթերի նկատմամբ պահանջները սահմանում է Հայարտոնագիրը:

Հոդված 21. Արդյունաբերական նմուշի արտոնագիր խնդրարկելու փաստաթղթերը

Արդյունաբերական նմուշի արտոնագիր խնդրարկելու փաստաթղթերը (արդյունաբերական նմուշի հայտ) պետք է վերաբերեն մեկ արդյունաբերական նմուշի եւ կարող են ներառել այդ նմուշի տարբերակները (արդյունաբերական նմուշի միասնության պահանջ):

Արդյունաբերական նմուշի հայտը պետք է պարունակի՝

ա) դիմում արտոնագիր ստանալու համար, որտեղ նշվում են հեղինակը (հեղինակները), հայտատուն, այն անձը (անձինք), որի (որոնց) անունով խնդրարկվում է արտոնագիրը, եւ նրանց բնակության կամ գտնվելու վայրը,

բ) արդյունաբերական նմուշի նկարագրությունը, ներառյալ դրա էական հատկանիշների թվարկումը,

գ) իրի, դրա մանրակերտի կամ նկարի լուսանկարների լրակազմը, որը մանրամասն եւ լրիվ արտահայտում է իրի արտաքին տեսքը,

դ) էրզոնոմիկական սխեման, իրի բաղադրանմուշների լրակազմը եւ դրա քարտը, ընդհանուր տեսքի զծագիրը, եթե դրանք անհրաժեշտ են արդյունաբերական նմուշի էությունը հասկանալու համար:

Արդյունաբերական նմուշի հայտին կցվում է սահմանված չափով տուրքի վճարումը հաստատող փաստաթուղթը, զեղչով տուրք վճարելու կամ տուրքից ազատվելու հիմքը:

Արդյունաբերական նմուշի հայտի նկատմամբ պահանջները սահմանում է Հայարտոնագիրը:

Հոդված 22. Արդյունաբերական սեփականության օբյեկտի առաջնությունը

Գյուտի, օգտակար սարքի, արդյունաբերական նմուշի առաջնությունը որոշվում է Հայարտոնագրի կողմից հայտը ստանալու թվականով:

Առաջնությունը կարող է որոշվել առաջին հայտը արդյունաբերական սեփականության պաշտպանության մասին Փարիզյան կոնվենցիային մասնակից որեւէ պետություն ներկայացնելու թվականով (կոնվենցիայով առաջնություն), եթե գյուտի եւ օգտակար սարքի հայտը Հայարտոնագիրը ստացել է նշված թվականից 12 ամսվա ընթացքում, իսկ արդյունաբերական նմուշի հայտը՝ 6 ամսվա ընթացքում: Նշված ժամկետները կարող են երկարաձգվել ոչ ավելի, քան 2 ամսով, եթե կոնվենցիայով առաջնության խնդրանքով հայտը չի ներկայացվել սահմանված ժամկետում՝ հայտատուից անկախ պատճառներով: Կոնվենցիայով առաջնության իրավունքից օգտվել ցանկացող հայտատուն պարտավոր է այդ մասին նշել հայտը ներկայացնելիս կամ Հայարտոնագրի կողմից այն ստանալու օրվանից 2 ամսվա ընթացքում՝ կցելով առաջին հայտի պատճենը, կամ ներկայացնել այն՝ հայտը Հայարտոնագրի կողմից ստանալու օրվանից 3 ամսվա ընթացքում:

Առաջնությունը կարող է որոշվել լրացուցիչ նյութերի ստացման թվականով, եթե դրանցով ձեւակերպված նոր հայտը ներկայացվել է 3 ամսվա ընթացքում, սկսած այն ծանուցագրի ստացման օրվանից, որով հայտատուն տեղեկացվել է ներկայացված լուծման էությունը փոփոխելու պատճառով դրանք հաշվի չառնելու մասին:

Առաջնությունը կարող է որոշվել նույն հեղինակի ավելի վաղ ներկայացրած նույն գյուտի, օգտակար սարքի, արդյունաբերական նմուշի էությունը բացահայտող հայտի ստացման թվականով, եթե հայտը, որով պահանջվում է այդպիսի առաջնություն, Հայարտոնագրի կողմից ստացվել է ավելի վաղ ներկայացված հայտի գրանցման օրվանից սկսած 12 ամսվա ընթացքում: Այդ դեպքում ավելի վաղ ներկայացված հայտը համարվում է ետկանչված:

Առաջնությունը կարող է որոշվել ավելի վաղ ստացված հայտերով յուրաքանչյուրի նկատմամբ պահպանելով սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգը:

Հայտի առաջնությունը չի կարող որոշվել այն հայտի ստացման թվականով, որով արդեն պահանջվել է ավելի վաղ առաջնություն:

Ձատված հայտով առաջնությունը որոշվում է սկզբնական հայտի ստացման թվականով, եթե զատված հայտը ներկայացվել է մինչև սկզբնական հայտով արտոնագիր չտալու վերաբերյալ վերջնական որոշման ընդունումը, իսկ արտոնագիր տալու մասին որոշման դեպքում՝ ոչ ուշ, քան արդյունաբերական սեփականության օբյեկտի պետական գրանցումը:

Եթե փորձաքննության ընթացքում պարզվում է, որ նույնական գյուտերը, օգտակար սարքերը, արդյունաբերական նմուշներն ունեն առաջնության միեւնույն թվականը, ապա արտոնագիրը կարող է տրվել այն հայտով, որն ունի Հայարտոնագրին ուղղված ավելի վաղ առաքման թվականի ապացույց: Այդ թվականների համընկնման դեպքում, հայտատուների համաձայնությամբ, նրանց տրվում է մեկ արտոնագիր: Համաձայնության չգալու դեպքում հարցը լուծվում է դատական կարգով:

Հոդված 23. Գյուտի հայտի փորձաքննությունը

Գյուտի հայտի փորձաքննությունը ներառում է նախնական եւ վերջնական (ըստ էության) փուլեր, որոնք անցկացնում է Հայարտոնագիրը:

Նախնական փորձաքննությունը անցկացվում է չորսամսյա ժամկետում, որի ընթացքում ըստուգվում է հայտի անհրաժեշտ եւ սահմանված պահանջներին համապատասխան ձեւակերպված փաստաթղթերի առկայությունը, պարզվում է ներկայացված գյուտի համապատասխանությունը այն օբյեկտներին, որոնց սույն օրենքով տրվում է իրավական պաշտպանություն, եւ անցկացվում է գյուտի նորության սահմանափակ ստուգում, որի ընթացքում հաշվի են առնվում առնվազն այն գյուտերը եւ օգտակար սարքերը, որոնք մինչեւ ներկայացված գյուտի առաջնության թվականը իրավական պաշտպանություն են ստացել Հայաստանի Հանրապետության տարածքում:

Փորձաքննության ընթացքում հայտատուն իր նախաձեռնությամբ կամ հարցման հիման վրա կարող է լրացուցիչ նյութեր ներկայացնելու ուղղումներ կամ ճշգրտումներ կատարել հայտի նյութերում՝ չփոփոխելով ներկայացված գյուտի էությունը: Լրացուցիչ նյութերը համարվում են գյուտի էությունը փոփոխող, եթե դրանք պարունակում են գյուտի հավակնության սահմանման մեջ մտցվելու ենթակա հատկանիշներ, որոնք առկա չեն եղել հայտի սկզբնական նյութերում: Նախնական փորձաքննության ընթացքում ստուգվում է, թե լրացուցիչ նյութերը արդյոք չեն փոփոխում ներկայացված գյուտի էությունը: Լրացուցիչ նյութերի այն մասը, որը փոփոխում է ներկայացված գյուտի էությունը, փորձաքննության ընթացքում հաշվի չի առնվում եւ հայտատուի կողմից կարող է ձեւակերպվել որպես առանձին հայտ: Փորձաքննության հարցմանը համապատասխան, լրացուցիչ նյութերը, այդ թվում գյուտի փոփոխված հավակնության սահմանումը, պետք է ներկայացվեն հարցումը կամ հայտին հակադրված նյութերի պատճենները ստանալու օրվանից երկամսյա ժամկետում: Նշված ժամկետում պահանջված նյութերը կամ դրանց ներկայացման ժամկետի երկարաձգման մասին դիմումը հայտատուի կողմից չներկայացնելու դեպքում հայտը համարվում է ետկանչված:

Եթե հայտը ձեւակերպված է դրա փաստաթղթերի նկատմամբ սահմանված պահանջների խախտումով, ապա հայտատուին ուղարկվում է հարցում՝ ուղղված կամ բացակայող փաստաթղթերը

երկամսյա ժամկետում ներկայացնելու առաջարկությամբ:

Նշված ժամկետում պահանջված նյութերը չներկայացնելու դեպքում հայտը համարվում է ետկանչված:

Եթե հայտը ներկայացվել է միասնության պահանջի խախտումով, ապա հայտատուին առաջարկվում է համապատասխան ծանուցագիրն ստանալու օրվանից երկամսյա ժամկետում հայտնել, թե գյուտերից որը պետք է քննարկվի եւ, անհրաժեշտության դեպքում, ճշգրտումներ կատարել հայտի փաստաթղթերում: Սկզբնական հայտով ներկայացված մյուս գյուտերը հայտատուն կարող է ներկայացնել զատված հայտերով:

Եթե միասնության պահանջի խախտման մասին ծանուցագիրն ստանալու օրվանից երկամսյա ժամկետում հայտատուն չի հայտնում, թե գյուտերից որը պետք է քննարկվի, եւ չի ներկայացնում ճշգրտված փաստաթղթեր, ապա քննարկվում է այն գյուտը, որը հավակնության սահմանման մեջ նշված է առաջինը:

Եթե նախնական փորձաքննության արդյունքում Հայարտոնագիրը պարզի, որ հայտը համապատասխանում է սահմանված պահանջներին եւ ըստուգման շրջանակներում համապատասխանում է նորության պայմաններին, ապա որոշում է կայացվում գյուտին ժամանակավոր պաշտպանություն ընձեռելու եւ հայտի ստացման օրվանից սկսած 5 տարվա գործողությանը ժամանակավոր արտոնագիր տալու մասին (այսուհետեւ նաեւ արտոնագիր) հայտատուի կողմից առաջարկված հավակնության սահմանումով:

Եթե նախնական փորձաքննության ընթացքում պարզվի, որ ներկայացված լուծումը չի պատահում իրավական պաշտպանությանը ենթակա գյուտերին կամ հայտատուի առաջարկված իրավունության սահմանումով ստուգման շրջանակներում չի բավարարում նորության պայմաններին, ապա որոշում է կայացվում արտոնագիր չտալու մասին:

Որոշման հետ չհամաձայնելու դեպքում, այն ստանալու օրվանից երկու ամսվա ընթացքում հայտատուն իրավունք ունի կրկնական փորձաքննության խնդրանքով դիմել Հայարտոնագիր: Կրկնական փորձաքննությունն անցկացվում է դիմումն ըստանալու օրվանից երկամսյա ժամկետում: Կրկնական փորձաքննության որոշման հետ չհամաձայնելու դեպքում այն ստանալու օրվանից երկու ամսվա ընթացքում հայտատուն իրավունք ունի գանգատ ներկայացնել Հայարտոնագրի գանգատարկման խորհուրդ:

Գանգատարկման խորհրդի որոշման հետ չհամաձայնելու դեպքում այն ստանալու օրվանից 3 ամսվա ընթացքում հայտատուն կարող է դիմել դատարան:

Հայտատուի կամ երրորդ անձի դիմումի համաձայն, որը կարող է տրվել հայտի ստացման թվականից 3 տարվա ընթացքում, Հայարտոնագիրը կատարում է հայտի վերջնական փորձաքննություն ըստ էության:

Վերջնական փորձաքննություն անցկացնելու վերաբերյալ երրորդ անձից ստացած դիմումի մասին Հայարտոնագիրը ծանուցում է հայտատուին:

Հայտի վերջնական փորձաքննության ընթացքում Հայարտոնագիրն իրավասու է հայտատուից պահանջելու լրացուցիչ նյութեր, առանց որոնց փորձաքննության անցկացումն անհնարին է: Փորձաքննության հարցմանը համապատասխան լրացուցիչ նյութերը, այդ թվում գյուտի փոփոխված հավակնության սահմանումը, պետք է ներկայացվեն

հարցման կամ հայտին հակադրված նյութերի պատճենների ստացման օրվանից երկամսյա ժամկետում: Նշված ժամկետում պահանջված նյութերը կամ դրանց ներկայացման ժամկետի երկարաձգման մասին դիմումը հայտատուի կողմից չներկայացնելու դեպքում հայտը համարվում է ետկանչված, եւ դադարեցվում է ժամանակավոր արտոնագրի գործողությունը:

Եթե հայտի վերջնական փորձաքննության ընթացքում Հայարտոնագիրը պարզի, որ ներկայացված գյուտը համապատասխանում է իրավական պաշտպանության պայմաններին, որոշում է կայացվում ժամանակավոր արտոնագրի փոխարեն, հայտատուի կողմից առաջարկված հավակնության սահմանումով հայտի ստացման թվականից 20 տարվա գործողությամբ արտոնագիր տալու մասին:

Եթե վերջնական փորձաքննության ընթացքում Հայարտոնագիրը պարզի, որ ներկայացված գյուտը չի համապատասխանում արտոնագրատուականության պայմաններին, ապա որոշում է կայացվում գյուտի ժամանակավոր արտոնագրի գործողությունը դադարեցնելու մասին:

Որոշման հետ չհամաձայնելու դեպքում հայտատուն այն ստանալու օրվանից երկամսյա ժամկետում իրավունք ունի կրկնական փորձաքննության անցկացման խնդրանքով դիմել Հայարտոնագիր: Կրկնական փորձաքննությունն անցկացվում է դիմումի ստացման օրվանից երկամսյա ժամկետում:

Կրկնական փորձաքննության որոշման հետ չհամաձայնելու դեպքում այն ստանալու օրվանից երեք ամսվա ընթացքում հայտատուն իրավունք ունի զանգատ ներկայացնել Հայարտոնագրի զանգատարկման խորհուրդ: Գանձատը քննարկվում է այն ստանալու օրվանից երեք ամսվա ընթացքում:

Գանձատարկման խորհրդի որոշման հետ չհամաձայնելու դեպքում հայտատուն այն ստանալու օրվանից վեց ամսվա ընթացքում կարող է դիմել դատարան:

Հայտատուն իրավունք ունի ծանոթանալու փորձաքննության ընթացքում հարցման կամ որոշման մեջ նշված բոլոր նյութերի հետ: Այդ նյութերին ծանոթանալու անհնարինության դեպքում հայտատուի դիմումի հիման վրա Հայարտոնագիրն այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում ուղարկում է պահանջված նյութերի պատճենները:

Հոդված 24. Օգտակար սարքի հայտի փորձաքննությունը

Օգտակար սարքի հայտի փորձաքննությունը Հայարտոնագիրն անցկացնում է միայն այն դրույթներին համապատասխան, որոնք սահմանված են սույն օրենքի 23 հոդվածի 2-րդ - 7-րդ, 9-րդ - 12-րդ, 21-րդ մասերով: Եթե փորձաքննության ընթացքում Հայարտոնագիրը պարզի, որ հայտը համապատասխանում է սահմանված պահանջներին, եւ ներկայացված օգտակար սարքը, որն արտահայտված է հայտատուի կողմից առաջարկված հավակնության սահմանումով, վերաբերում է արտոնագրատուական օգտակար սարքերին եւ ստուգման շրջանակներում համապատասխանում է նորության պայմաններին, ապա որոշում է կայացվում այդ հավակնության սահմանումով օգտակար սարքի արտոնագիր տալու մասին:

Արտոնագիրը տրվում է հայտատուի պատասխանատվությամբ, առանց դրա իսկության երաշխիքի:

Հոդված 25. Արդյունաբերական նմուշի հայտի փորձաքննությունը

Արդյունաբերական նմուշի հայտի փորձաքննությունը Հայարտոնագիրն անցկացնում է միայն այն դրույթներին համապատասխան, որոնք սահմանված են սույն օրենքի 23 հոդվածի 2-րդ - 7-րդ, 9-րդ - 12-րդ, 21-րդ մասերով: Եթե փորձաքննության ընթացքում Հայարտոնագիրը պարզի, որ հայտը համապատասխանում է սահմանված պահանջներին, եւ ներկայացված արդյունաբերական նմուշը, որն արտահայտված է հայտատուի կողմից առաջարկված էական հատկանիշների ամբողջությամբ, վերաբերում է արտոնագրատուական արդյունաբերական նմուշներին ու ստուգման շրջանակներում համապատասխանում է նորության պայմաններին, ապա որոշում է կայացվում այդ հատկանիշների ամբողջությամբ արդյունաբերական նմուշի արտոնագիր տալու մասին:

Արտոնագիրը տրվում է հայտատուի պատասխանատվությամբ, առանց դրա իսկության երաշխիքի:

Հոդված 26. Հայտի փոխակերպումը

Հայտատուն իրավունք ունի փորձաքննության ընթացքում կամ գյուտի արտոնագիր չտալու մասին Հայարտոնագրի որոշումն ստանալու օրվանից 2 ամսվա ընթացքում, համապատասխան դիմում ներկայացնելով, գյուտի հայտը փոխակերպել օգտակար սարքի հայտի, իսկ մինչեւ օգտակար սարքի արտոնագիր տալու վերաբերյալ Հայարտոնագրի որոշման ընդունումը օգտակար սարքի հայտը՝ գյուտի հայտի: Այս պարագաներում պահպանվում է սկզբնական հայտի առաջնությունը:

Հոդված 27. Հայտի ետկանչումը

Հայտատուն իրավունք ունի մինչեւ գյուտի, օգտակար սարքի, արդյունաբերական նմուշի պետական գրանցումը ետ կանչել ներկայացված հայտը:

Հոդված 28. Արդյունաբերական սեփականության օբյեկտների պետական գրանցումը եւ արտոնագրի հանձնումը

Արտոնագիր տալու մասին որոշման ընդունումից հետո արտոնագիր տալու համար սահմանված տուրքի վճարման դեպքում Հայարտոնագիրը գյուտը, օգտակար սարքը, արդյունաբերական նմուշը գրանցում է համապատասխանաբար գյուտերի գրանցման Հայաստանի Հանրապետության պետական մատյանում, օգտակար սարքերի գրանցման Հայաստանի Հանրապետության պետական մատյանում, արդյունաբերական նմուշների գրանցման Հայաստանի Հանրապետության պետական մատյանում եւ արտոնագիր է տալիս այն անձին, որի անունով խնդրարկվել էր այն:

Եթե արտոնագիրը խնդրարկվել է մի քանի անձանց անունով, ապա նրանց տրվում է մեկ արտոնագիր:

Գյուտի, օգտակար սարքի, արդյունաբերական նմուշի հեղինակին (հեղինակներին) Հայարտոնագիրը հանձնում է նրա (նրանց) հեղինակությունը հաստատող վկայական:

Արտոնագրի ձեւը եւ դրա մեջ նշվող տեղեկությունների ցանկը, ինչպես նաեւ հեղինակությունը հաստատող վկայականի ձեւը եւ դրա մեջ նշվող տեղեկությունների ցանկը սահմանում է Հայարտոնագիրը:

Արտոնագրատիրոջ պահանջով արտոնագրի մեջ տեղ գտած ակնհայտ սխալներն ուղղում է Հայարտոնագիրը:

Հոդված 29. Արտոնագրի մասին տեղեկությունների հրապարակումը

Գյուտը, օգտակար սարքը, արդյունաբերական նմուշը Հայաստանի Հանրապետության պետական համապատասխան մատյանում գրանցելու հետ միաժամանակ Հայարտոնագիրը իր պաշտոնական տեղեկագրում տեղեկություններ է հրապարակում արտոնագիր տալու մասին: Հրապարակվող տեղեկություններում նշվում են՝ հեղինակը (հեղինակները), եթե նա (նրանք) չի (չեն) հրաժարվել որպես այդպիսին հիշատակվելուց, արտոնագրատերը, գյուտի կամ օգտակար սարքի անվանումն ու հավակնության սահմանումը, արդյունաբերական նմուշի անվանումը, էական հատկանիշների ցանկն ու պատկերը: Հրապարակվող տեղեկությունների լրիվ կազմը սահմանում է Հայարտոնագիրը: Արտոնագիր տալու մասին տեղեկությունների հրապարակումից հետո յուրաքանչյուր անձ իրավասու է ժամոթանալու հայտի նյութերին:

Գլուխ 6

Արտոնագրի գործողության դադարեցումը

Հոդված 30. Արտոնագրի վիճարկումը

Արտոնագիրն իր գործողության ամբողջ ժամկետի ընթացքում, արտոնագիր տալու դեմ զանգատի հիման վրա կարող է ամբողջովին կամ մասնակիորեն ճանաչվել անվավեր, եթե՝

- ա) խախտված են սույն օրենքով սահմանված արտոնագրատնակության պայմանները,
- բ) գյուտի կամ օգտակար սարքի հավակնության սահմանման կամ արդյունաբերական նմուշի էական հատկանիշների ամբողջության մեջ առկա են հատկանիշներ, որոնք բացակայում են հայտի սկզբնական նյութերում,
- գ) նկարագրության մեջ արդյունաբերական սեփականության օբյեկտը լրիվ չի բացահայտված եւ բավարար չէ նրա իրականացման համար,
- դ) արտոնագրի մեջ սխալ է նշված հեղինակը կամ արտոնագրատերը:

Գանգատ ներկայացնող անձը պարտավոր է հիմնավորել այն եւ ներկայացնել համապատասխան տուրքի վճարումը հաստատող փաստաթուղթ:

Սույն հոդվածի առաջին մասի "ա", "բ", "գ" կետերով պայմանավորված զանգատները քննարկում է Հայարտոնագրի գանգատարկման խորհուրդը՝ գանգատը ստանալու օրվանից 6-ամսյա ժամկետում, արտոնագրատիրոջը ժանոթացնելով այդ գանգատի հետ: Քննարկումը չպետք է դուրս գա գանգատի մեջ պարունակվող հիմնավորումների շրջանակներից:

Գանգատարկման խորհրդի որոշման հետ չհամաձայնելու դեպքում կողմերից յուրաքանչյուրը որոշման ընդունման օրվանից 6- ամսյա ժամկետում կարող է դիմել դատարան:

Հոդված 31. Արտոնագրի գործողության վաղաժամկետ դադարեցումը

Արտոնագրի գործողությունը վաղաժամկետ դադարեցվում է՝

- ա) սույն օրենքի 30 հոդվածի համաձայն արտոնագիրն ամբողջությամբ անվավեր ճանաչելու դեպքում,
- բ) արտոնագրատիրոջ ներկայացրած դիմումի հիման վրա,
- գ) արտոնագիրը գործողության մեջ պահելու համար տարեկան տուրքը ժամանակին չվճարելու դեպքում:

Արտոնագրի գործողության դադարեցման մասին Հայարտոնագիրը տեղեկություն է հրապարակում իր պաշտոնական տեղեկագրում:

Գլուխ 7

Հեղինակների եւ արտոնագրատերերի իրավունքների պաշտպանությունը

Հոդված 32. Պատասխանատվություն գյուտի, օգտակար սարքի, արդյունաբերական նմուշի հեղինակների իրավունքների խախտման համար

Հեղինակության յուրացումը, համահեղինակության պարտադրումը, մինչեւ հայտ ներկայացնելը առանց հեղինակի համաձայնության հայտի էության հրապարակումը, ինչպես նաեւ ներկայացված գյուտի, օգտակար սարքի, արդյունաբերական նմուշի էության բացահայտումը պետական արտոնագրային փորձագետի կողմից միջեւ դրանց պաշտոնական հրապարակումը առաջացնում են պատասխանատվություն՝ համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության:

Հայարտոնագրի պետական արտոնագրային փորձագետները եւ պաշտոնական անձինք ծառայության ժամանակ եւ երկու տարի դրա ավարտից հետո իրավունք չունեն հայտ ներկայացնելու, ուղղակիորեն կամ անուղղակիորեն արտոնագրի իրավունք ձեռք բերելու:

Հոդված 33. Արտոնագրային վեճերի քննումը դատական կարգով

Դատական կարգով քննվում են սույն օրենքի կիրառման հետ կապված հետեւյալ վեճերը՝

- ա) արտոնագրի ստացման,
- բ) հեղինակության,
- գ) արտոնագրատիրոջը պարգելու,
- դ) օգտագործման բացառիկ իրավունքի խախտման, ինչպես նաեւ արտոնագրատիրոջ՝ արտոնագրից բխող այլ գույքային իրավունքների խախտման,
- ե) գյուտի, օգտակար սարքի, արդյունաբերական նմուշի օգտագործման վերաբերյալ լիցենզային համաձայնագրի կնքման եւ կատարման,
- զ) վաղորդք օգտագործման,
- է) գործատուի կողմից հեղինակների վարձատրության եւ նրանց միջեւ այլ փոխհարաբերությունների,
- ը) սույն օրենքով նախատեսված փոխհատուցումների վճարման,
- թ) արտոնագրից բխող իրավունքների հետ կապված այլ վեճեր:

Գլուխ 8

Եզրափակիչ դրույթներ

Հոդված 34. Բաց թողած ժամկետների վերականգնումը

Սույն օրենքի 23 հոդվածում սահմանված եւ հայտատուի բաց թողած ժամկետները կարող են վերականգնվել համապատասխան տուրք վճարելու դեպքում:

Բաց թողած ժամկետների վերականգնման մասին խնդրագիրը կարող է ներկայացվել ժամկետի ավարտման օրվանից 6 ամսվա ընթացքում:

Հոդված 35. Գյուտի, օգտակար սարքի, արդյունաբերական նմուշի արտոնագրումը օտարերկրյա պետություններում

Հայաստանի Հանրապետությունում ստեղծված գյուտը, օգտակար սարքը, արդյունաբերական նմուշը կարող է արտոնագրվել օտարերկրյա պետություններում:

Մինչեւ օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետությունում ստեղծված գյուտի, օգտակար սարքի, արդյունաբերական նմուշի հայտ ներկայացնելը հայտատուն պարտավոր է արդյունաբերական սեփականության տվյալ օբյեկտի հայտը ներկայացնել Հայարտոնագիր՝ տեղեկացնելով նաեւ օտարերկրյա պետություններում այն արտոնագրելու մտադրության մասին: Նշված հաղորդումն ստանալու օրվանից երեք ամսվա ընթացքում Հայարտոնագրի կողմից արգելքի բացակայության դեպքում հայտը կարող է ներկայացվել օտարերկրյա պետություններ:

Սույն հոդվածի 2-րդ մասի պահանջների խախտումը հանգեցնում է պատասխանատվության՝ համաձայն Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրության:

Հոդված 36. Օտարերկրյա ֆիզիկական եւ իրավաբանական անձանց իրավունքները

Օտարերկրյա ֆիզիկական եւ իրավաբանական անձինք Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերին համապատասխան կամ փոխադարձության սկզբունքով օգտվում են սույն օրենքով նախատեսված իրավունքներից եւ կրում պատասխանատվություն Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին եւ իրավաբանական անձանց հավասար:

Հոդված 37. Արտոնագրային տուրքեր

Արտոնագրի հայտ ներկայացնելու, արտոնագիր ստանալու եւ այն գործողության մեջ պահելու, ինչպես նաեւ արտոնագրի հետ կապված այլ իրավաբանական նշանակություն ունեցող գործողություններ կատարելու համար զանձվում են տուրքեր: Տուրքերի ցանկը, դրանց չափն ու վճարման ժամկետները, տուրքի չափի նվազեցումը կամ ետ վերադարձնելը, տուրքից ազատվելու հիմքերը եւ կարգը սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

Հոդված 38. Միջազգային պայմանագրերը

Եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսվում են այլ կանոններ, քան սույն օրենքով, ապա գործում են միջազգային պայմանագրերի կանոնները:

*Հայաստանի Հանրապետության նախագահ
Լ. ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ*

*Երեւան
21 օգոստոսի 1993թ.*

Կ Ա Ր Գ

գյուտերի ԽՍՀՄ հեղինակային վկայագրերի,
 արդյունաբերական նմուշների ԽՍՀՄ վկայագրերի
 եւ ԽՍՀՄ գյուտերի պետական հիմնապաշարի
 անունով տրված ԽՍՀՄ արտոնագրերի գործողությունը
 Հայաստանի Հանրապետության տարածքում դադարեցնելու
 եւ մնացած ժամկետի համար Հայաստանի Հանրապետության
 արտոնագրեր ստանալու դիմումների ներկայացման եւ
 քննարկման

(Հայարտոնագրի 1994թ. սեպտեմբերի 19-ի N 45 հրամանով կատարված փոփոխություններով)

Սույն կարգը սահմանված է ի կատարումն
 "Արտոնագրերի մասին" Հայաստանի Հանրապետու-
 թյան օրենքը կիրարկելու մասին Հայաստանի Հան-
 րապետության Գերագույն խորհրդի 1993թ. հուլիսի
 20-ի որոշման 5-րդ կետի եւ տարածվում է այն գյու-
 տերի ԽՍՀՄ հեղինակային վկայագրերի եւ ԽՍՀՄ
 գյուտերի պետական հիմնապաշարի անունով տրը-
 ված ԽՍՀՄ արտոնագրերի, ինչպես նաեւ արդյունա-
 բերական նմուշների ԽՍՀՄ վկայագրերի վրա, որոնց
 հայտ ներկայացնելու թվականից չի լրացել "Արտո-
 նագրերի մասին" Հայաստանի Հանրապետության
 օրենքով սահմանված համապատասխան արդյու-
 նաբերական սեփականության օբյեկտի արտոնագրի
 գործողության ժամկետը:

1. Գյուտերի ԽՍՀՄ հեղինակային վկայա-
 գրերով, որոնց համար չի լրացել հայտը ներկայաց-
 նելու թվականից 20 տարվա ժամկետը, իսկ արդյու-
 նաբերական նմուշների ԽՍՀՄ վկայագրերով՝ 15
 տարվա ժամկետը, ինչպես նաեւ ԽՍՀՄ գյուտերի
 պետական հիմնապաշարի անունով տրված ԽՍՀՄ
 արտոնագրերով, որոնց գործողության ժամկետը չի
 լրացել, հայտատուները հեղինակների հետ համա-
 տեղ կարող են դիմում ներկայացնել Հայարտոնա-
 գիր ԳՀ տարածքում նշված պահպանական փաս-
 տաթղթերի գործողությունը դադարեցնելու եւ միա-
 ժամանակ մնացած ժամկետով Հայաստանի Հան-
 րապետության արտոնագիր ստանալու համար:

Հայաստանի Հանրապետության այդ ար-
 տոնագրերի գործողությունը կարող է դադարեցվել
 զանգատի հիման վրա այն դեպքերում, երբ պաշտ-
 պանվող օբյեկտը չի համապատասխանում հայտ
 ներկայացնելու թվականին ԽՍՀՄ-ում գործող
 օրենսդրությամբ սահմանված արտոնագրատնակու-
 թյան պայմաններին:

2. Դիմումը պետք է վերաբերի մեկ պահպա-
 նական փաստաթղթի եւ պարունակի բերված ձեռի
 բոլոր տվյալները (տես հավելվածներ 1 եւ 2):

Դիմումը ստորագրում են հայտատուն, հե-
 ղինակը(ները) կամ նրանց իրավահաջորդը եւ այն
 անձը, որի անունով խնդրարկվում է արտոնագիրը
 (ապագա արտոնագրատերը):

Եթե հայտատուն կամ ապագա արտոնա-
 գրատերը իրավաբանական անձ է, դիմումը ստորա-
 գրում է ձեռնարկության, հիմնարկության, կազմա-
 կերպության (այսուհետեւ ձեռնարկության) ղեկավա-
 րը, նշելով պաշտոնը եւ ազգանունը: Ձեռնարկու-

թյան ղեկավարի ստորագրությունը վավերացվում է
 ձեռնարկության կնիքով:

Օտարերկրյա հայտատուները դիմումները
 ներկայացնում են Հայարտոնագրում գրանցված ար-
 տոնագրային հավատարմատարների միջոցով:

Այն դիմումները, որոնք օտարերկրյա հայ-
 տատուները ներկայացրել են անմիջապես Հայար-
 տոնագիր, ընդունվում եւ վերցվում են հաշվառման
 ըստ ստացման թվականի: Հետագա գործավարու-
 թյունը դրանցով կիրականացվի Հայարտոնագրում
 գրանցված արտոնագրային հավատարմատարների
 միջոցով, որոնք կնշանակվեն հայտատուների կող-
 մից:

Դիմումին կից ներկայացվում են՝

ա) գյուտի (արդյունաբերական նմուշի)
 պահպանական փաստաթղթի բոլոր օրինակները
 (բնագիրը կամ պատճենները), ինչպես նաեւ գյուտի
 նկարագրության (արդյունաբերական նմուշի ընդհա-
 նուր տեսքի լուսանկարի) մեկ օրինակը,

բ) հայտատուի անվանման փոփոխությունը
 կամ իրավահաջորդությունը հաստատող վավերաց-
 ված փաստաթուղթ, եթե հայտատու հանդիսացող
 իրավաբանական անձը վերակազմավորվել է կամ
 փոխվել է նրա անվանումը,

գ) ժառանգության իրավունքը հաստատող
 փաստաթուղթ, եթե դիմումը ստորագրել է հեղինա-
 կի ժառանգորդը,

դ) արտոնագիր տալու եւ այն հերթական
 տարում գործողության մեջ պահելու համար սահ-
 մանված տուրքերի վճարումը հաստատող փաստա-
 թուղթը ԽՍՀՄ պահպանական փաստաթղթի համա-
 թի նշումով:

Դիմումը ներկայացվում է հայերեն լեզվով:

3. Հայարտոնագիրը՝

ա) քննարկում է ներկայացված դիմումը այն
 ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում,

բ) գրանցում է գյուտը (արդյունաբերական
 նմուշը) ԳՀ գյուտերի (արդյունաբերական նմուշնե-
 րի) պետական գրանցամատյանում,

գ) ԳՀ արտոնագիրը հանձնում է եւ ԽՍՀՄ
 պահպանական փաստաթղթի օրինակները վերա-
 դարձնում է արտոնագրատիրոջը անձամբ կամ
 ուղարկում պատվիրված փոստային առաքմամբ,

դ) հրապարակում է ԳՀ տարածքում գործո-
 ղությունը դադարեցված ԽՍՀՄ պահպանական
 փաստաթղթերի եւ դրանց փոխարեն տրված ԳՀ ար-

տոնագրերի մասին տեղեկությունները իր պաշտոնական տեղեկագրում:

4. Եթե ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում սույն կարգով սահմանված պահանջներին, ապա ապագա արտոնագրատիրոջը (նրա ներկայացուցչին) ուղարկվում է հարցում ուղղված կամ բացակայող փաստաթղթերը երկամսյա ժամկետում ներկայացնելու առաջարկությամբ:

Նշված ժամկետում պահանջված նյութերը չեն ներկայացնելու դեպքում դիմումը համարվում է ետկանչված:

5. Դիմումը կարող է ետ կանչվել հայտատուի, հեղինակի եւ ապագա արտոնագրատիրոջ կողմից ստորագրված խնդրագրով, որը պետք է ներկայացվի մինչեւ գյուտի (արդյունաբերական մոնուշի) պետական գրանցումը:

6. Գյուտի (արդյունաբերական մոնուշի) արտոնագիրը գործում է 33 գյուտերի (արդյունաբերական մոնուշիների) պետական գրանցամատյանում այն գրանցելու թվականից:

Գյուտը (արդյունաբերական մոնուշը) 33 համապատասխան պետական գրանցամատյանում գրանցվում է 33 արտոնագիր ստանալու մասին դիմումը Հայարտոնագրի կողմից ստանալու թվականով:

Սույն կարգին համապատասխան տրված 33 արտոնագրի վրա կատարվում է "Հայաստանի Հանրապետությունում գրանցված է ԽՍՀՄ N: ----- հեղինակային վկայագրի հիման վրա" կամ "Հայաստանի Հանրապետությունում գրանցված է ԽՍՀՄ N: ----- վկայագրի հիման վրա" գրառումը:

Կատարված գրառումները վավերացվում են ստորագրությամբ եւ կնիքով:

7. Գրանցված գյուտի լրիվ նկարագրությունը չի վերահրատարակվում. նրա վրա կատարվում է "Գրանցված է Հայաստանի Հանրապետությունում 199 թ ----- ին, արտոնագիր N:-----" գրառումը:

Հայարտոնագրի պետ
Ս. Ղանթարջյան

27 հունվարի 1994թ.
ք. Երեւան

Հավելված 2

ՀԱՅԱՐՏՈՆԱԳԻՐ
375010, Երևան, Գլխավոր պող.
Կառավարական տուն 3

Դ Ի Ս ՈՒ Մ

արդյունաբերական նմուշի ԽՍՀՄ վկայագրի
գործողությունը Հայաստանի Հանրապետության
տարածքում դադարեցնելու եւ մնացած ժամկետի
համար Հայաստանի Հանրապետության արտոնագիր
ստանալու մասին

Ես (մենք) -----
հեղինակի(ների) անունը, ազգանունը

եւ -----
հայտատուի(ների) լրիվ անվանումը

խնդրում եմ (եմք) -----
արդյունաբերական նմուշի անվանումը

-----արդյունաբերական նմուշի

N: ----- ԽՍՀՄ վկայագրի (հայտի գրանցման N: -----, ԱՆՄԴ-ի ցուցիչը -----,
հայտի առաջնության թվականը -----) գործողությունը դադարեցնել Հայաստանի
Հանրապետության տարածքում եւ տալ Հայաստանի Հանրապետության արտոնագիր -----

ապագա արտոնագրատիրոջ անունը, հայրանունը, ազգանունը կամ

լրիվ անվանումը եւ հասցեն

Կ.Տ. Հայտատու(ներ)----- / /
----- / /

Հեղինակ(ներ) ----- / /
----- / /

Կ.Տ. Ապագա արտոնագրատեր ----- / /

Նամակագրության հասցեն-----
փոստային հասցեն,

հասցեատիրոջ անունը, հայրանունը, ազգանունը կամ լրիվ անվանումը

Կից ներկայացվող փաստաթղթերը`

Կ Ա Ր Գ

գյուտերի եւ արդյունաբերական նմուշների ԽՍՀՄ եւ ԽՍՀՄ նախկին սուբյեկտ պետությունների արտոնագրերը Հայարտոնագրում գրանցելու

(Հայարտոնագրի 1994թ. սեպտեմբերի 19-ի N 45 հրամանով կատարված փոփոխություններով)

Սույն կարգը սահմանված է ի կատարումն "Արտոնագրերի մասին" Հայաստանի Հանրապետության օրենքը կիրարկելու մասին Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի 1993թ. հունիսի 20-ի որոշման 3-րդ կետի եւ տարածվում է մինչեւ 1992թ. դեկտեմբերի 8-ի առաջնությամբ գյուտերի եւ արդյունաբերական նմուշների ԽՍՀՄ եւ ԽՍՀՄ նախկին սուբյեկտ պետությունների այն արտոնագրերի վրա, որոնց գործողության ժամկետը չի ավարտվել:

1. Մինչեւ 1992թ. դեկտեմբերի 8-ի առաջնությամբ գյուտերի եւ արդյունաբերական նմուշների ԽՍՀՄ եւ ԽՍՀՄ նախկին սուբյեկտ պետությունների այն արտոնագրերին, որոնց գործողության ժամկետը չի ավարտվել, Հայարտոնագրում գրանցելուց հետո, գործողության մնացած ժամկետի համար տրվում է " Արտոնագրերի մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա տրված արտոնագրերի իրավական կարգավիճակ:

Այդ գյուտերի եւ արդյունաբերական նմուշների արտոնագրերի գործողությունը կարող է դադարեցվել զանգատի հիման վրա այն դեպքում, երբ պահպանվող օբյեկտը չի համապատասխանում հայտ ներկայացնելու թվականին արտոնագիր տվող պետության օրենսդրությամբ սահմանված արտոնագրաունակության պայմաններին:

2. Արտոնագրերի գրանցումը Հայարտոնագրում կատարվում է դիմումի համաձայն, սահմանված տուրքը վճարելու դեպքում:

Դիմումը պետք է վերաբերի մեկ արտոնագրի եւ պարունակի բերված համապատասխան ձեւի բոլոր տվյալները (տես հավելվածներ 1 եւ 2):

Դիմումը ստորագրում է արտոնագրատերը կամ նրա ժառանգորդը (իրավահաջորդը): Եթե արտոնագրատերը իրավաբանական անձ է, դիմումը ստորագրում է ձեռնարկության, հիմնարկության, կազմակերպության (այսուհետեւ ձեռնարկություն) ղեկավարը, նշելով պաշտոնը եւ ազգանունը: Ձեռնարկության ղեկավարի ստորագրությունը վավերացվում է ձեռնարկության կնիքով:

Օտարերկրյա արտոնագրատերերը դիմումները ներկայացնում են Հայարտոնագրում գրանցված արտոնագրային հավատարմատարների միջոցով:

Այն դիմումները, որոնք օտարերկրյա արտոնագրատերերը ներկայացրել են անմիջապես Հայարտոնագիր, ընդունվում են եւ վերցվում են հաշվառման ըստ ստացման թվականի: Հետագա գործավարությունը դրանցով կիրականացվի Հայարտոնագրում գրանցված արտոնագրային հավատարմատարների միջոցով, որոնք կնշանակվեն արտոնագրատերերի կողմից:

Դիմումին կից ներկայացվում են՝

ա) գյուտի (արդյունաբերական նմուշի) արտոնագիրը (բնագիրը կամ պատճենը) եւ գյուտի նկարագրության (արդյունաբերական նմուշի ընդհանուր տեսքի լուսանկարի) երկու օրինակը: ԽՍՀՄ նախկին սուբյեկտ պետության կողմից տրված արտոնագրին կցվում է նաեւ այդ պետության արտոնագրային գերատեսչության կողմից վավերացված տվյալ գյուտի նկարագրության (արդյունաբերական նմուշի մատենագիտական տվյալների եւ էական հատկանիշների համախմբության) հայերեն կամ ռուսերեն թարգմանությունը (2 օրինակ),

բ) արտոնագիրը ՀՀ տարածքում հերթական տարում գործողության մեջ պահելու եւ ՀՀ արտոնագիր տալու համար սահմանված տուրքի վճարումը հաստատող փաստաթուղթը, գրանցվող արտոնագրի համարի նշումով,

գ) իրավահաջորդությունը կամ անվանման փոփոխությունը հաստատող վավերացված փաստաթուղթը այն դեպքերում, երբ արտոնագրատեր հանդիսացող իրավաբանական անձը վերակազմավորվել է,

դ) ժառանգության իրավունքը հաստատող փաստաթուղթը, եթե այդ իրավունքը ծագել է ԽՍՀՄ (ԽՍՀՄ նախկին սուբյեկտ պետության) արտոնագիրը տրվելուց հետո, եւ դիմումը ստորագրված է արտոնագրատիրոջ ժառանգորդի կողմից:

Դիմումը ներկայացվում է հայերեն լեզվով ոչ ուշ, քան 1995թ. հունիսի 30-ը:

3. Հայարտոնագիրը՝

ա) քննարկում է ներկայացված դիմումը այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում,

բ) գրանցում է գյուտը (արդյունաբերական նմուշը) ՀՀ գյուտերի (արդյունաբերական նմուշների) պետական գրանցամատյանում: Եթե ԽՍՀՄ նախկին սուբյեկտ պետության կողմից գյուտի արտոնագիրը տրված է միայն ձեռնական փորձաքննության արդյունքով, ապա այդ արտոնագիրը գրանցում է " Արտոնագրերի մասին" ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով նախատեսված փորձաքննության արդյունքի հիման վրա,

գ) արտոնագրի վրա կատարում է՝ "Գրանցված է Հայաստանի Հանրապետության գյուտերի (արդյունաբերական նմուշների) պետական գրանցամատյանում, N:----- 199 թ.-----" գրառումը,

դ) ՀՀ արտոնագիրը հանձնում է եւ ԽՍՀՄ արտոնագիրը վերադարձնում է արտոնագրատիրոջը անձամբ կամ դրանք ուղարկում է պատվիրված փոստային առաքմամբ,

ե) գրանցված գյուտի (արդյունաբերական նմուշի) արտոնագրի վերաբերյալ տեղեկությունները իրապարակում է իր պաշտոնական տեղեկագրում:

4. Եթե ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում սույն կարգով սահմանված պահանջներին, ապա արտոնագրատիրոջը ուղարկվում է հարցում ուղղված կամ բացակայող փաստաթղթերը երկանայա ժամկետում ներկայացնելու առաջարկությամբ:

Նշված ժամկետում պահանջված նյութերը չներկայացնելու դեպքում դիմումը համարվում է ետկանչված:

5. Դիմումը արտոնագրատիրոջ կամ նրա իրավահաջորդի կողմից կարող է ետ կանչվել միայն մինչեւ համապատասխան գրանցամատյանում տվյալ օբյեկտի գրանցումը:

6. Գյուտի (արդյունաբերական նմուշի) արտոնագիրը գործում է 77 գյուտերի (արդյունաբերական նմուշների) պետական գրանցամատյանում այն գրանցելու թվականից: Գյուտը (արդյունաբերական

նմուշը) 77 համապատասխան պետական գրանցամատյանում գրանցվում է տվյալ գյուտի (արդյունաբերական նմուշի) արտոնագիրը գրանցելու մասին դիմումը Հայարտոնագրի կողմից ստանալու թվականով:

Սույն կարգին համապատասխան տրված արտոնագրի վրա կատարվում է "Հայաստանի Հանրապետությունում գրանցված է ԽՍՀՄ (կամ ԽՍՀՄ նախկին սուբյեկտ պետության անվանումը) N:----- արտոնագրի հիման վրա" գրառումը:

7. Կատարված գրառումները վավերացվում են ստորագրությամբ եւ կնիքով:

8. Գրանցված գյուտի լրիվ նկարագրությունը չի վերահրատարակվում. նրա վրա կատարվում է "Գրանցված է Հայաստանի Հանրապետությունում 199 թ. -----ին, արտոնագիր N:-----" գրառումը:

Հայարտոնագրի պետ
Ս. Ղանթարջյան

27 հունվարի 1994թ.
ք. Երեւան

Հավելված 1

ՀԱՅԱՐՏՈՆԱԳԻՐ
375010, Երեւան, Գլխավոր պող.
Կառավարական տուն 3

Դ Ի Մ ՈՒ Մ

գյուտի ԽՍՀՄ (ԽՍՀՄ նախկին սուբյեկտ
պետության) արտոնագիրը Հայարտոնագրում
գրանցելու մասին

Ես (մենք) -----
արտոնագրատիրոջ անունը, հայրանունը, ազգանունը

կամ լրիվ անվանումը

խնդրում եմ (ենք) գրանցել -----
գյուտի անվանումը

գյուտը, ըստ ----- N: ----- արտոնագրի
պետության անվանումը

(հայտի գրանցման N: -----, հայտի ներկայացման թվականը -----):

Նշված ԽՍՀՄ արտոնագիրը գործում է 1991թ. դեկտեմբերի 24-ի դրությամբ:

Կ.Տ. Արտոնագրատեր ----- /
ստորագրությունը, թվականը

Արտոնագրատիրոջ հասցեն -----

Նամակագրության հասցեն -----
փոստային հասցեն, անունը,

հայրանունը, ազգանունը կամ լրիվ անվանումը

Հեղինակներ

Կից ներկայացվող փաստաթղթերը`

Հավելված 2

ՀԱՅԱՐՏՈՆԱԳԻՐ
375010, Երեւան, Գլխավոր պող.
Կառավարական տուն 3

Դ Ի Ս ՈՒ Մ

արդյունաբերական մեծաչափի ԽՍՀՄ
(ԽՍՀՄ նախկին սուբյեկտ պետության) արտոնագիրը
Հայարտոնագրում գրանցելու մասին

Ես (մենք) -----
արտոնագրատիրոջ անունը, հայրանունը, ազգանունը

կամ լրիվ անվանումը

խնդրում եմ (ենք) գրանցել -----
արդյունաբերական մեծաչափի անվանումը

արդյունաբերական մեծաչափ, ըստ ----- N: ----- արտոնագրի
պետության անվանումը

(հայտի գրանցման N: ----- , հայտի ներկայացման թվականը -----):

Նշված ԽՍՀՄ արտոնագիրը գործում է 1991թ. դեկտեմբերի 24-ի դրությամբ:

Կ.Տ. Արտոնագրատեր ----- /
ստորագրությունը, թվականը

Արտոնագրատիրոջ հասցեն -----

Նամակագրության հասցեն -----
փոստային հասցեն, անունը,

հայրանունը, ազգանունը կամ լրիվ անվանումը

Հեղինակներ

Կից ներկայացվող փաստաթղթերը`

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

արդյունաբերական սեփականության օբյեկտների իրավական պաշտպանության հետ կապված իրավաբանական նշանակություն ունեցող գործողությունների համար գանձվող տուրքերի մասին

1. Ընդհանուր դրույթներ

Սույն կանոնակարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան արդյունաբերական սեփականության օբյեկտների իրավական պաշտպանության հետ կապված իրավաբանական նշանակություն ունեցող գործողությունների համար գանձվող տուրքերի ցանկն ու չափերը, դրանց վճարման ժամկետներն ու կարգը:

2. Տուրքերի գանձումը

Սույն կանոնակարգով սահմանված տուրքերը վճարվում են Հայաստանի Հանրապետության բյուջե՝ համապատասխան գումարները Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր արտոնագրային վարչության հաշվին վճարելու միջոցով:

Հայաստանի Հանրապետությունում մշտական բնակության կամ գտնվելու վայր չունեցող ֆիզիկական կամ իրավաբանական անձինք սույն կանոնակարգով սահմանված տուրքերը վճարում են ԱՄՆ-ի դոլարով, եթե Հայաստանի Հանրապետության հետ կնքված միջազգային պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

3. Գյուտի իրավական պաշտպանության հետ կապված տուրքերը

3.1. Գյուտի արտոնագիր ստանալու հայտ ներկայացնելու համար վճարվում է տուրք Հայաստանի Հանրապետությունում սահմանված ամսական նվազագույն աշխատավարձի (այսուհետեւ՝ նվազագույն աշխատավարձ) 0,3 չափով (ԱՄՆ-ի 90 դոլար):

Եթե հայտը վերաբերում է միասնական մտահղացում կազմող գյուտերի խմբի, ապա մեկից ավելի ամեն մի գյուտի համար վճարվում է լրացուցիչ տուրք նվազագույն աշխատավարձի 0,07 չափով (ԱՄՆ-ի 20 դոլար):

Եթե վճարված տուրքի գումարը չի համապատասխանում հայտով ներկայացված միասնական մտահղացում կազմող գյուտերի քանակին, ապա լրացուցիչ տուրքը պետք է վճարվի այդ մասին ծանուցագրի ստացման օրվանից երկամսյա ժամկետում:

3.2. Եթե Հայարտոնագիրը հայտը ստացել է փարիզյան կոնվենցիայով սահմանված ժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան 33 "Արտոնագրերի մասին" օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետում, ապա վճարվում է տուրք նվազագույն աշխատավարձի 0,6 չափով (ԱՄՆ-ի 180 դոլար):

3.3. Գյուտի հայտի նախնական փորձաքննություն անցկացնելու համար վճարվում է տուրք նվազագույն աշխատավարձի 0,3 չափով (ԱՄՆ-ի 90

դոլար):

Եթե հայտը վերաբերում է միասնական մտահղացում կազմող գյուտերի խմբի, ապա մեկից ավելի ամեն մի գյուտի փորձաքննության համար վճարվում է լրացուցիչ տուրք նվազագույն աշխատավարձի 0,15 չափով (ԱՄՆ-ի 45 դոլար):

3.4. Նախնական փորձաքննության որոշման հետ չհամաձայնելու դեպքում Հայարտոնագրի գանձատարկման խորհուրդ գանձատ ներկայացնելու համար վճարվում է տուրք նվազագույն աշխատավարձի 0,3 չափով (ԱՄՆ-ի 90 դոլար):

3.5. Սույն կետի 3.1. ենթակետի առաջին եւ երկրորդ մասերով եւ 3.3 ենթակետով սահմանված տուրքերը վճարվում են հայտը ներկայացնելիս:

Սույն կետի 3.2. ենթակետով նախատեսված տուրքը վճարվում է համապատասխան ծանուցագիր ստանալու օրվանից երկամսյա ժամկետում:

Եթե 3.3. ենթակետի 2-րդ մասով վճարված տուրքի գումարը չի համապատասխանում հայտով ներկայացված միասնական մտահղացում կազմող գյուտերի քանակին, ապա լրացուցիչ տուրքը պետք է վճարվի այդ մասին ծանուցագրի ստացման օրվանից երկամսյա ժամկետում:

3.6. Գյուտի հայտը մի քանի ինքնուրույն հայտերի բաժանելու դեպքում ներկայացվող յուրաքանչյուր գատված հայտի համար վճարվում է տուրք ինչպես առանձին ինքնուրույն հայտի համար:

3.7. Ժամանակավոր արտոնագիր տալու եւ այն հրապարակելու համար վճարվում է տուրք նվազագույն աշխատավարձի 0,3 չափով (ԱՄՆ-ի 90 դոլար):

3.8. Ժամանակավոր արտոնագիր տալու դեմ կամ ԽՍՀՄ գյուտի պահպանական փաստաթղթերի գործողության դեմ Հայարտոնագրի գանձատարկման խորհուրդ գանձատ ներկայացնելու համար վճարվում է տուրք մեկ նվազագույն աշխատավարձի չափով (ԱՄՆ-ի 300 դոլար):

3.9. Գյուտի հայտի ըստ էության փորձաքննություն անցկացնելու համար վճարվում է տուրք նվազագույն աշխատավարձի 0,9 չափով (ԱՄՆ-ի 270 դոլար):

Գյուտի հայտին կից 1970թ. հունիսի 19-ի Միջազգային արտոնագրային համագործակցության պայմանագրին (PCT) համապատասխան որեւէ միջազգային մարմնի կողմից կազմված միջազգային որոնման հաշվետվություն կամ միջազգային նախնական փորձաքննության եզրակացություն ներկայացնելու դեպքում փորձաքննության անցկացման համար վճարվող տուրքի չափը նվազեցվում է 70 տոկոսով:

Եթե հայտը վերաբերում է միասնական մտահղացում կազմող գյուտերի խմբի, ապա մեկից ավելի ամեն մի գյուտի ըստ էության փորձաքննության համար վճարվում է լրացուցիչ տուրք նվազագույն աշխատավարձի 0,6 չափով (ԱՄՆ-ի 180 դոլար):

Եթե ըստ էության փորձաքննության անցկացման համար վճարված տուրքի գումարը չի համապատասխանում հայտով ներկայացված միասնական մտահղացում կազմող գյուտերի քանակին, ապա լրացուցիչ տուրքը պետք է վճարվի այդ մասին ծանուցագրի ստացման օրվանից երկամսյա ժամկետում:

Գյուտի հայտի ըստ էության փորձաքննության անցկացման համար տուրքը վճարվում է ըստ էության փորձաքննություն անցկացնելու վերաբերյալ դիմում ներկայացնելիս:

3.10. Գյուտի հայտի ըստ էության փորձաքննության որոշման հետ չհամաձայնելու դեպքում Հայարտոնագրի գանգատարկման խորհուրդ գանգատ ներկայացնելու համար վճարվում է տուրք նվազագույն աշխատավարձի 0,6 չափով (ԱՄՆ-ի 180 դոլար):

3.11. Գյուտի արտոնագիր տալու եւ այն հրապարակելու համար գանձվում է տուրք նվազագույն աշխատավարձի 0,3 չափով (ԱՄՆ-ի 90 դոլար):

Արտոնագիր տալու համար տուրքը գանձվում է արտոնագիր տալու մասին որոշման ստացման օրվանից եռամսյա ժամկետում: Նշված ժամկետից հետո, բայց դրա ավարտից ոչ ուշ, քան 6 ամս-

վա ընթացքում տուրքը մուծելու դեպքում դրա չափն ավելացվում է 50 տոկոսով: Այս ժամկետում տուրքը չմուծելու դեպքում հայտը համարվում է ետկանչված:

3.12. Գյուտի արտոնագիր տալու դեմ Հայարտոնագրի գանգատարկման խորհուրդ գանգատ ներկայացնելու համար վճարվում է տուրք նվազագույն աշխատավարձի 1,5 չափով (ԱՄՆ-ի 450 դոլար):

3.13. Հայտատուի բաց թողած ժամկետների վերականգնման դիմում ներկայացնելու համար վճարվում է տուրք նվազագույն աշխատավարձի 0,6 չափով (ԱՄՆ-ի 180 դոլար):

3.14. Գյուտի հայտը օգտակար սարքի հայտի փոխակերպման դիմում ներկայացնելու համար վճարվում է տուրք նվազագույն աշխատավարձի 0,15 չափով (ԱՄՆ-ի 45 դոլար):

3.15. Սույն կետի 3.10., 3.12., 3.13., 3.14. ենթակետերով սահմանված տուրքերը վճարվում են համապատասխան փաստաթուղթ ներկայացնելիս:

3.16. Գյուտի արտոնագիրը գործողության մեջ պահելու տուրքերը (տարեկան տուրքեր) վճարվում են արտոնագրի գործողության երկրորդ տարվանից, հետեւյալ չափերով (նվազագույն աշխատավարձի մասերով եւ ԱՄՆ-ի դոլարներով) (Աղյուսակ 1)* :

Աղյուսակ 1

Արտոնագրի գործողության տարին	Գյուտի արտոնագրի գործողության տարեկան տուրքի չափը (յուրաքանչյուր առանձին տարվա համար)	
	նվ. աշխ. մասերով	ԱՄՆ-ի դոլարներով
երկրորդ, երրորդ	0,3	90
չորրորդ, հինգերորդ	0,4	120
վեցերորդ, յոթերորդ	0,5	150
ութերորդ, իններորդ	0,6	180
տասներորդ, տասնմեկերորդ	0,9	270
տասներկուերորդ, տասներեքերորդ	1,0	300
տասնչորսերորդ, տասնհինգերորդ	1,2	360
տասնվեցերորդ, տասնյոթերորդ	1,4	420
տասնութերորդ, քսաներորդ	1,6	480

3.17. Տարեկան տուրքը վճարվում է արտոնագրի գործողության լրիվ տարվա համար: Տարեկան տուրքի առաջին վճարումը կատարվում է մինչեւ արտոնագրի գործողության երկրորդ տարվա սկիզբը կամ արտոնագիր տալու համար սահմանված տուրքի հետ միասին: Արտոնագրի գործողության յուրաքանչյուր հաջորդ տարվա համար տուրքը վճարվում է մինչեւ գործողության ընթացիկ տարվա վերջը:

3.18. Տարեկան տուրքը կարող է վճարվել նաեւ սահմանված ժամկետը լրանալուց հետո 6 ամսվա ընթացքում: Այս դեպքում տուրքի չափն ավելացվում է 50 տոկոսով:

Նշված ժամկետում տարեկան տուրքը

չվճարելու դեպքում արտոնագրի գործողությունը դադարեցվում է:

3.19. Արտոնագրի գիշման վերաբերյալ պայմանագրի կամ լիցենզային պայմանագրի զըրանցման համար վճարվում է տուրք նվազագույն աշխատավարձի 0,6 չափով (ԱՄՆ-ի 180 դոլար):

4. Օգտակար սարքի իրավական պաշտպանության հետ կապված տուրքերը

4.1. Օգտակար սարքի արտոնագիր ստանալու հայտ ներկայացնելու համար վճարվում է տուրք նվազագույն աշխատավարձի 0,3 չափով (ԱՄՆ-ի 90 դոլար):

Եթե հայտը վերաբերում է միասնական

մտահղացում կազմող օգտակար սարքերի խմբի, ապա մեկից ավելի ամեն մի օգտակար սարքի համար վճարվում է լրացուցիչ տուրք նվազագույն աշխատավարձի 0,07 չափով (ԱՄՆ-ի 20 դոլար):

Եթե վճարված տուրքի գումարը չի համապատասխանում հայտով ներկայացված միասնական մտահղացում կազմող օգտակար սարքերի քանակին, ապա լրացուցիչ տուրքը պետք է վճարվի այդ մասին ծանուցագրի ստացման օրվանից երկամսյա ժամկետում:

4.2. Եթե Հայարտոնագիրը հայտը ստացել է փարիզյան կոնվենցիայով սահմանված ժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան 33 "Արտոնագրերի մասին" օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետում, ապա վճարվում է տուրք նվազագույն աշխատավարձի 0,6 չափով (ԱՄՆ-ի 180 դոլար):

4.3. Օգտակար սարքի հայտի փորձաքննություն անցկացնելու համար վճարվում է տուրք նվազագույն աշխատավարձի 0,3 չափով (ԱՄՆ-ի 90 դոլար):

Եթե հայտը վերաբերում է միասնական մտահղացում կազմող օգտակար սարքերի խմբի, ապա մեկից ավելի ամեն մի օգտակար սարքի փորձաքննության համար վճարվում է լրացուցիչ տուրք նվազագույն աշխատավարձի 0,15 չափով (ԱՄՆ-ի 45 դոլար):

4.4. Փորձաքննության որոշման հետ չհամաձայնելու դեպքում Հայարտոնագրի գանձատարկման խորհուրդ գանձատ ներկայացնելու համար վճարվում է տուրք նվազագույն աշխատավարձի 0,2 չափով (ԱՄՆ-ի 60 դոլար):

4.5. Սույն կետի 4.1. ենթակետի առաջին եւ երկրորդ մասերով եւ 4.3. ենթակետով սահմանված տուրքերը վճարվում են հայտը ներկայացնելիս:

Սույն կետի 4.2. ենթակետով նախատեսված տուրքը վճարվում է համապատասխան ծանուցագրի ստանալու օրվանից երկամսյա ժամկետում:

Եթե 4.3. ենթակետի 2-րդ մասով վճարված տուրքի գումարը չի համապատասխանում հայտով ներկայացված միասնական մտահղացում կազմող օգտակար սարքերի քանակին, ապա լրացուցիչ տուրքը պետք է վճարվի այդ մասին ծանուցագրի ստացման օրվանից երկամսյա ժամկետում:

4.6. Օգտակար սարքի հայտը մի քանի ինքնուրույն հայտերի բաժանելու դեպքում ներկայացվող յուրաքանչյուր զատված հայտի համար վճարվում է տուրք ինչպես առանձին ինքնուրույն հայտի համար:

4.7. Օգտակար սարքի հայտին կից 1970թ. հունիսի 19-ի Միջազգային արտոնագրային համագործակցության պայմանագրին (PCT) համապատասխան որեւէ միջազգային մարմնի կողմից կազմված միջազգային որոնման հաշվետվություն կամ միջազգային նախնական փորձաքննության եզրակացություն ներկայացնելու դեպքում փորձաքննության անցկացման համար վճարվող տուրքի չափը նվազեցվում է 70 տոկոսով:

4.8. Օգտակար սարքի արտոնագիր տալու եւ այն հրապարակելու համար գանձվում է տուրք նվազագույն աշխատավարձի 0,3 չափով (ԱՄՆ-ի 90 դոլար):

Արտոնագիր տալու համար տուրքը գանձվում է արտոնագիր տալու մասին որոշման ստացման օրվանից երկամսյա ժամկետում: Նշված ժամկետից հետո, բայց դրա ավարտից ոչ ուշ, քան 6 ամսվա ընթացքում տուրքը մուծելու դեպքում դրա չափն ավելացվում է 50 տոկոսով: Այս ժամկետում տուրքը չմուծելու դեպքում հայտը համարվում է ետկանչված:

4.9. Օգտակար սարքի արտոնագիր տալու դեմ Հայարտոնագրի գանձատարկման խորհուրդ գանձատ ներկայացնելու համար վճարվում է տուրք մեկ նվազագույն աշխատավարձի չափով (ԱՄՆ-ի 300 դոլար):

4.10. Հայտատուի բաց թողած ժամկետների վերականգնման դիմում ներկայացնելու համար վճարվում է տուրք նվազագույն աշխատավարձի 0,6 չափով (ԱՄՆ-ի 180 դոլար):

4.11. Օգտակար սարքի հայտը գյուտի հայտի փոխակերպման դիմում ներկայացնելու համար վճարվում է տուրք նվազագույն աշխատավարձի 0,3 չափով (ԱՄՆ-ի 90 դոլար):

4.12. Սույն կետի 4.9., 4.10., 4.11. ենթակետերով սահմանված տուրքերը վճարվում են համապատասխան փաստաթուղթը ներկայացնելիս:

4.13. Օգտակար սարքի արտոնագիրը գործողության մեջ պահելու տուրքերը (տարեկան տուրքեր) վճարվում են արտոնագրի գործողության երկրորդ տարվանից, հետեյալ չափերով (նվազագույն աշխատավարձի մասերով եւ ԱՄՆ-ի դոլարներով) (Աղյուսակ 2)*:

4.14. Տարեկան տուրքը վճարվում է արտոնագրի գործողության լրիվ տարվա համար: Տարեկան տուրքի առաջին վճարումը կատարվում է մինչեւ արտոնագրի գործողության երկրորդ տարվա

Աղյուսակ 2

Արտոնագրի գործողության տարին	Օգտակար սարքի արտոնագրի գործողության տարեկան տուրքի չափը (յուրաքանչյուր առանձին տարվա համար)	
	նվ. աշխ. մասերով	ԱՄՆ-ի դոլարներով
երկրորդ, երրորդ	0,3	90
չորրորդ, հինգերորդ	0,4	120
վեցերորդ, յոթերորդ	0,5	150
ութերորդ, իններորդ	0,6	180
տասներորդ	0,7	210

սկիզբը կան արտոնագիր տալու համար սահմանված տուրքի հետ միասին: Արտոնագրի գործողության յուրաքանչյուր հաջորդ տարվա համար տուրքը վճարվում է մինչև գործողության ընթացիկ տարվա վերջը:

4.15. Տարեկան տուրքը կարող է վճարվել նաև սահմանված ժամկետը լրանալուց հետո 6 ամսվա ընթացքում: Այս դեպքում տուրքի չափն ավելացվում է 50 տոկոսով: Նշված ժամկետում տարեկան տուրքը չվճարելու դեպքում արտոնագրի գործողությունը դադարեցվում է:

4.16. Արտոնագրի զիջման վերաբերյալ պայմանագրի կամ լիցենզային պայմանագրի գրանցման համար վճարվում է տուրք նվազագույն աշխատավարձի 0,4 չափով (ԱՄՆ-ի 120 դոլար):

5. Արդյունաբերական նմուշի իրավական պաշտպանության հետ կապված տուրքերը

5.1. Արդյունաբերական նմուշի արտոնագիր ստանալու հայտ ներկայացնելու համար վճարվում է տուրք նվազագույն աշխատավարձի 0,3 չափով (ԱՄՆ-ի 90 դոլար):

Եթե հայտը պարունակում է 2-10 տարբերակներ, ապա վճարվում է լրացուցիչ տուրք նվազագույն աշխատավարձի 0,3 չափով (ԱՄՆ-ի 90 դոլար):

Եթե հայտը պարունակում է 10-ից ավելի տարբերակներ, ապա վճարվում է եւս լրացուցիչ տուրք նվազագույն աշխատավարձի 0,3 չափով (ԱՄՆ-ի 90 դոլար):

Եթե վճարված տուրքի գումարը չի համապատասխանում հայտով ներկայացված տարբերակների քանակին, ապա լրացուցիչ տուրքը պետք է վճարվի այդ մասին ծանուցագրի ստացման օրվանից երկամսյա ժամկետում:

5.2. Եթե Հայարտոնագիրը հայտը ստացել է փարիզյան կոնվենցիայով սահմանված ժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան 37 "Արտոնագրերի մասին " օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետում, ապա վճարվում է տուրք նվազագույն աշխատավարձի 0,6 չափով (ԱՄՆ-ի 180 դոլար):

5.3. Արդյունաբերական նմուշի հայտի փորձաքննություն անցկացնելու համար վճարվում է տուրք նվազագույն աշխատավարձի 0,2 չափով (ԱՄՆ-ի 60 դոլար):

Եթե հայտը պարունակում է 2-10 տարբերակներ, ապա փորձաքննության համար վճարվում է լրացուցիչ տուրք նվազագույն աշխատավարձի 0,15 չափով (ԱՄՆ-ի 45 դոլար):

Եթե հայտը պարունակում է 10-ից ավելի տարբերակներ, ապա վճարվում է եւս լրացուցիչ տուրք նվազագույն աշխատավարձի 0,15 չափով (ԱՄՆ-ի 45 դոլար):

Եթե փորձաքննություն անցկացնելու համար վճարված տուրքի գումարը չի համապատասխանում հայտով ներկայացված տարբերակների քանակին, ապա լրացուցիչ տուրքը պետք է վճարվի այդ մասին ծանուցագրի ստացման օրվանից երկամսյա ժամկետում:

5.4. Փորձաքննության որոշման հետ չհամաձայնելու դեպքում Հայարտոնագրի գանձատարկման խորհուրդը գանձատ ներկայացնելու համար վճարվում է տուրք նվազագույն աշխատավարձի 0,2 չափով (ԱՄՆ-ի 60 դոլար):

5.5. Սույն կետի 5.1. ենթակետով եւ 5.3. կետի առաջին եւ երկրորդ մասերով սահմանված

տուրքերը վճարվում են հայտը ներկայացնելիս:

Սույն կետի 5.2. ենթակետով նախատեսված տուրքը վճարվում է համապատասխան ծանուցագրի ստանալու օրվանից երկամսյա ժամկետում:

Եթե 5.3. ենթակետի 2-րդ մասով վճարված տուրքի գումարը չի համապատասխանում հայտով ներկայացված տարբերակների քանակին, ապա լրացուցիչ տուրքը պետք է վճարվի այդ մասին ծանուցագրի ստացման օրվանից երկամսյա ժամկետում:

5.6. Արդյունաբերական նմուշի հայտը մի քանի ինքնուրույն հայտերի բաժանելու դեպքում ներկայացվող յուրաքանչյուր զատված հայտի համար վճարվում է տուրք ինչպես առանձին ինքնուրույն հայտի համար:

5.7. Արդյունաբերական նմուշի արտոնագիր տալու եւ այն հրապարակելու համար գանձվում է տուրք նվազագույն աշխատավարձի 0,3 չափով (ԱՄՆ-ի 90 դոլար):

Արտոնագիր տալու համար տուրքը գանձվում է արտոնագիր տալու մասին որոշման ստացման օրվանից երկամսյա ժամկետում: Նշված ժամկետից հետո, բայց դրա ավարտից ոչ ուշ, քան 6 ամսվա ընթացքում տուրքը մուծելու դեպքում դրա չափն ավելացվում է 50 տոկոսով: Այս ժամկետում տուրքը չմուծելու դեպքում հայտը համարվում է ետկանչված:

5.8. Արդյունաբերական նմուշի արտոնագիր տալու դեմ կան նախկին ԽՍՀՄ արդյունաբերական նմուշի պահպանական փաստաթղթերի գործողության դեմ Հայարտոնագրի գանձատարկման խորհուրդը գանձատ ներկայացնելու համար վճարվում է տուրք մեկ նվազագույն աշխատավարձի չափով (ԱՄՆ-ի 300 դոլար):

5.9. Հայտատուի բաց թողած ժամկետների վերականգնման դիմում ներկայացնելու համար վճարվում է տուրք նվազագույն աշխատավարձի 0,6 չափով (ԱՄՆ-ի 180 դոլար):

5.10. Սույն կետի 5.4., 5.8., 5.9. ենթակետերով սահմանված տուրքերը վճարվում են համապատասխան փաստաթուղթ ներկայացնելիս:

5.11. Արդյունաբերական նմուշի արտոնագիրը գործողության մեջ պահելու տուրքերը (տարեկան տուրքեր) վճարվում են արտոնագրի գործողության երկրորդ տարվանից, հետեւյալ չափերով (նվազագույն աշխատավարձի մասերով եւ ԱՄՆ-ի դոլարներով) (Աղյուսակ 3)*:

5.12. Տարեկան տուրքը վճարվում է արտոնագրի գործողության լրիվ տարվա համար: Տարեկան տուրքի առաջին վճարումը կատարվում է մինչև արտոնագրի գործողության երկրորդ տարվա սկիզբը կան արտոնագիր տալու համար սահմանված տուրքի հետ միասին: Արտոնագրի գործողության յուրաքանչյուր հաջորդ տարվա համար տուրքը վճարվում է մինչև գործողության ընթացիկ տարվա վերջը:

5.13. Տարեկան տուրքը կարող է վճարվել նաև սահմանված ժամկետը լրանալուց հետո 6 ամսվա ընթացքում: Այս դեպքում տուրքի չափն ավելացվում է 50 տոկոսով: Նշված ժամկետում տուրքը չվճարելու դեպքում արտոնագրի գործողությունը դադարեցվում է:

5.14. Արտոնագրի զիջման վերաբերյալ պայմանագրի կամ լիցենզային պայմանագրի գրանցման համար վճարվում է տուրք նվազագույն աշխատավարձի 0,4 չափով (ԱՄՆ-ի 120 դոլար):

Արտոնագրի գործողության տարին	Արդյունաբերական նմուշի արտոնագրի գործողության տարեկան տուրքի չափը (յուրաքանչյուր առանձին տարվա համար)	
	նվ. աշխ. մասերով	ԱՄՆ-ի դոլարներով
երկրորդ, երրորդ	0,3	90
չորրորդ, հինգերորդ	0,4	120
վեցերորդ, յոթերորդ	0,5	150
ութերորդ, իններորդ	0,6	180
տասներորդ, տասնմեկերորդ	0,8	240
տասներկուերորդ, տասներեքերորդ	1,0	300
տասնչորսերորդ, տասնհինգերորդ	1,2	360

6. Տուրքից ազատվելու, նրա չափի նվազեցման եւ ետ վերադարձնելու հիմքերը եւ կարգը

6.1. Այն դեպքում, երբ արդյունաբերական սեփականության օբյեկտի հեղինակը (հեղինակները) եւ այն անձը, որի անունով խնդրարկվում է արտոնագիրը, Հայաստանի Հանրապետությունում մշտական բնակվող սովորողներ կամ թոշակառուներ են, եւ նրանցից յուրաքանչյուրի ամսական եկամուտը չի գերազանցում նվազագույն աշխատավարձի չափը, հայտ ներկայացնելու եւ փորձաքննություն անցկացնելու համար տուրքեր չեն վճարում:

Այն դեպքում, երբ արդյունաբերական սեփականության օբյեկտի հեղինակները Հայաստանի Հանրապետությունում մշտական բնակվող ուսանողներ կամ սակավ ապահովված անձինք են, որոնցից յուրաքանչյուրի ամսական եկամուտը չի գերազանցում նվազագույն աշխատավարձի չափը եւ արտոնագիրը խնդրարկվում է Հայաստանի Հանրապետությունում մշտական բնակվող այն անձանց անունով, որոնցից յուրաքանչյուրի ամսական եկամուտը չի գերազանցում նվազագույն աշխատավարձի չափը,

հայտ ներկայացնելու եւ փորձաքննություն անցկացնելու համար տուրքերը վճարվում են 50 տոկոս զեղչով:

Վերոհիշյալ տուրքերից ազատվելը կամ զեղչված չափով տուրքերի վճարումն իրականացվում է տուրք վճարողի բնակավայրի համապատասխան պետական հարկային ծառայության կողմից հաստատված փաստաթղթերի հիման վրա:

6.2. Վճարված տուրքերը վերադարձման ենթակա չեն, բացառությամբ այն դեպքերի, երբ տուրքը սխալ է վճարվել կամ գործողությունը, որի իրագործման նպատակով գանձվել է տուրքը, չի կատարվել:

Սույն կանոնակարգի 3.4., 3.10., 4.4. եւ 5.4. ենթակետերով վճարված տուրքերը ենթակա են վերադարձման, եթե Հայարտոնագրի գանձատարկման խորհուրդը կամ դատարանը որոշում են ընդունում ի օգուտ գանձատարկողի:

Վճարված գումարը կարող է վերադարձվել տուրքը վճարող անձի դիմումի հիման վրա կամ հաշվի առնվել այլ տուրքերի վճարման ժամանակ՝ հանելով փաստացի ծախսերը, եթե այդպիսիք կատարվել են:

Հայարտոնագրի պետ
Ս. Ղանթարյան

9 փետրվարի 1994թ.
ք. Երեւան

* Պետության կողմից զաղտնի ճանաչված գյուտի, օգտակար սարքի, արդյունաբերական նմուշի արտոնագիրը գործողության մեջ պահելու համար տարեկան տուրքեր չեն վճարվում:

ԳՅՈՒՏԵՐ

**Գյուտերին վերաբերող մատենագիտական տվյալների
նույնականացման ԻՆԻԴ միջազգային կոդերը
ըստ ՄՍՀԿ ST.9 ստանդարտի**

11	արտոնագրի համարը
21	հայտի համարը
22	հայտի ստացման թվականը
24	այն թվականը, որից սկսվում է ՀՀ արտոնագրով վերապահված իրավունքների գործողությունը
31	առաջնային հայտի համարը
32	առաջնության թվականը
33	այն երկրի կոդը, որտեղ ներկայացված է եղել առաջնային հայտը
46	հավակնության սահմանման հրապարակման թվականը
51	միջազգային արտոնագրային դասակարգման (ՄԱԴ) ցուցիչը(ները)
54	գյուտի անվանումը
57	գյուտի հավակնության սահմանումը
71	հայտատու(ներ), երկրի կոդը
72	գյուտի հեղինակ(ներ), երկրի կոդը
73	արտոնագրատեր, երկրի կոդը
74	արտոնագրային հավատարմատար
76	հեղինակ, որը նաեւ հայտատու եւ արտոնագրատեր է
86	միջազգային հայտի (PCT) համարը եւ ներկայացման թվականը
(*)	տվյալներ նախկին պաշտպանական այն փաստաթղթի մասին, որի հիման վրա տրվել է ՀՀ արտոնագիրը

Փաստաթղթի տեսակի կոդը

A1	արտոնագիր
A2	Ժամանակավոր արտոնագիր
B1	ԽՍՀՄ կամ ԽՍՀՄ նախկին սուբյեկտ հանդիսացող պետության պաշտպանական փաստաթղթի հիման վրա տրված արտոնագիր
B2	Նախապես ՀՀ Ժամանակավոր արտոնագրով պաշտպանված գյուտի արտոնագիր

Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին

(51)⁵ **A23L2/00** (11) **1 A2**
 (21) 000077 (22) 23.07.93
 (76) Խաչիկ Կարապետի Գարրիելյան, Երևան,
 Պարոնյան 28^ա, բն.54, AM
 (54) (57)

Պազով հազեցած ոչ ոգելից ըմպելիք, որը պարունակում է շաքար, կիտրոնաթթու, կիտրոնի թուրմ, կիտրոնի էսենցիա, ածխածնի դիօքսիդ եւ ջուր. *տարբերվում է* նրանով, որ լրացուցիչ ավելացված է վանիլին եւ էթիլային սպիրտ՝ բաղադրամասերի հետևելյալ հարաբերակցությամբ.

կգ/100 դալ ըմպելիքի համար	
շաքար	114,78-120,0
կիտրոնաթթու	1,662-1,900
վանիլին	0,002-0,003
ածխածնի դիօքսիդ	37,0-38,0

լ/100 դալ ըմպելիքի համար	
կիտրոնի թուրմ	2,0 - 3,0
կիտրոնի էսենցիա	0,78-0,80
էթիլային սպիրտ	4,7 - 4,8
ջուր	մնացածը:

(51)⁵ **A23L2/00** (11) **2 A2**
 (21) 000078 (22) 23.07.93
 (76) Խաչիկ Կարապետի Գարրիելյան, Երևան,
 Պարոնյան 28^ա, բն.54, AM
 (54) (57)

